


Համարի թեման՝ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ.
ՀԱՅԱՑՔ ԴԱՐԱԲԱՂԻՑ

№ 8 / ՕԳՈՍՏՈՍ



Մեզ համար կարգավորման ընդունելի տարբերակը սեռ սպասում է իր փուլին

Աշոտ ԴՈՒԼՅԱՆ

ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ

-Պարոն Ղուլյան, հետադարձ հայացք ձգելով դարաբաղյան հիմնախնդրի քաղաքական կարգավորման բանակցային գործընթացի անցած ողջ ժամանակահատվածի վրա՝ Ձեր կարծիքով, կարգավորման ո՞ր տարբերակն է (եր) առավելա համապատասխանում մեր երկրի շահերին:

-Հայեցակարգային առումով միջնորդների ընկալումը որոշակիորեն փոխակերպվել է, բայց, ինչպես նախկինում, այսօր էլ, կարծես, առաջնային է դիտվում հակամարտության զինված փուլի հետեւանքների հաղթահարումը: Մենք, ընդհակառակը, գտնում ենք, որ կարգավորումը պետք է լինի համապարփակ, արդարացի, այնպիսին, որ կապահովի կայուն խաղաղություն եւ համագործակցություն ամբողջ

տարածաշրջանում՝ տեւական ժամանակով: Այս իմաստով մենք առաջնային ենք տեսնում Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը: Իսկ եթե նկատի առնվի, որ ներկա իրողությունները ոչ թե Լեռնային Ղարաբաղի տարածքային հավակնությունների, այլ Ադրբեջանի զինված նախահարձակումը ինքնապաշտպանության՝ միջազգայնորեն ընդունված իրավունքի ուժով դիմագրավելու եւ, ինչպես ընդունված է ասել, հակառակորդին խաղաղություն պարտադրելու գործողությունների արդյունքում են ձեւավորվել, ապա ԼՂ-ն, Ադրբեջանի ռազմատենչ հավակնությունների վտանգավորությունից ելնելով, եւ ռազմաքաղաքական, եւ իրավական ու պատմական, ինչպես նաեւ՝ բարոյական նկատառումներով լիովին իրավասու է ներկայիս ստատուս-քվոն համարել իր համար՝ միակ ընդունելի լուծում: Այնպես որ, մեզ համար ընդունելի կարգավորման տարբերակը դեռ սպասում է իր հերթին:

-ԼՂՀ արտգործնախարարը հայտարարել էր, որ մադրիդյան սկզբունքներն անընդունելի են մեզ համար: Արդյո՞ք ք միանշանակ կարելի է պնդել, որ դա մեր երկրի իշխանությունների պաշտոնական դիրքորոշումն է:

-Այդ տեսակետն արտաքին գործերի նախարար Գեորգի Պետրոսյանը հնչեցրել է խորհրդարանում, կառավարության հետ հարց ու պատասխանի ժամին: Կարծում եմ, Արցախի պաշտոնական դիրքորոշումը պետք է հրապարակվի այն պահին, երբ այդ նույն սկզբունքները պաշտոնապես ներկայացվեն մեր երկրի իշխանություններին: Քանի դեռ այդ ընթացակարգը տեղի չի ունեցել, դարաբաղյան կողմը պահպանում է վերապահում անելու իր իրավունքը: Ավելի վաղ, 2008թ. դեկտեմբերի 29-ին Ազգային ժողովի խմբակցությունները հանդես են եկել հայտարարությամբ, որտեղ գործընթացի կոնստեքստը գնահատված է որպես ոչ լիարժեք: Դա խորհրդարանի ընդհանրական տեսակետն է:

-Նորերս Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան ասաց, որ 1998 թվականին Հայաստանի իշխանությունը որոշեց Ադրբեջանի հետ բանակցություններ վարել նաեւ Լեռնային Ղարաբաղի անունից: Արդյո՞ք դա այդպես է, եւ կա՞, արդյոք, փաստաթուղթ, որով ԼՂՀ այն ժամանակվա ղեկավարությունը ՀՀ ղեկավարությանն է պատվիրակել Արցախի անունից բանակցելու իրավունքը, թե՞ դա արվել է նրա լուռ համաձայնությամբ: Տասը տարի անց որքանո՞վ է նպատակահարմար թվում նման դիրքորոշումը:

-Մինսկի խմբի ամերիկացի համանախագահողը մի շարք արտառոց հայտարարություններ նույնպես արել է: Ճշմարտությանն ավելի մոտ է, որ 1998թ. ստեղծվել էր իրավիճակ, երբ բանակցությունները կարող էին խզվել: Այն հաղթահարելու համար ընտրվել է Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ ուղղակի խորհրդատվությունների ձեւաչափը: Մակայն դա չի նշանակում, թե ԼՂ-ն դադարել է լինել հակամարտության կողմ: Այնպես որ՝ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ ընթացող քննարկումները լրիվ ձեւաչափով բանակցությունների համար համաձայնեցված հիմք ստեղծելու իմաստ ունեն:

-ԼՂՀ իշխանությունները քանիցս հայտարարել են, որ առանց դարաբաղյան կողմի մասնակցության բանակցային գործընթացը չի կարող արդյունավետ լինել: Մինչդեռ գործընթացը շարունակվում է առանց մեր մասնակցության, եւ Հայաստանը շարունակում է խոսել նաեւ ԼՂՀ անունից: ԼՂՀ իշխանությունները մտադի՞ր են կոնկրետ քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ: Արդյո՞ք կարելի է նման միտում համարել վերջերս ԼՂՀ Ազգային ժողովի մի շարք պատգամավորների՝ արտահերթ նիստ գումարելու անհաջող փորձը:

-Արդեն նշեցի, որ ներկա փուլում փորձ է արվում գտնել մի համաձայնեցված հիմք, որի վրա կարող է կառուցվել ամբողջական ձեւաչափով բանակցային գործընթացը: Ուրեմն, այսօր ոչ թե լուծվում է խնդիրն առհասարակ, այլ քննարկվում են ապագա բանակցությունների հիմքերը: Բանակցություններին ԼՂՀ մասնակցության անհրաժեշտությունը ենթադրվում է խնդրի բուն էությունից: Դա ոչ թե ցանկություն է կամ նախապայման, այլ՝ սկզբունք: Կարգավորման մասին ԼՂՀ դիրքորոշումը հայեցակարգի իմաստով, միջնորդական ջանքերի համար դժվարընկալելի է: Հետեւաբար, մենք պետք է փորձենք մեր պատկերացումն ավելի հիմնավորված եւ փաստարկված ներկայացնել նույն միջնորդներին: Որոշ

դեպքերում, այնինչ, փորձ է արվում տպավորություն եւ վերաբերմունք ձեւավորել, թե Հայաստանը «յուրացրել է ԼՂՀ ձայնը»: Դա թյուր պատկերացում է: Մենք պետք է մեր տեսակետը պաշտպանենք միջնորդների հետ շփումներում:

-Ըստ Ձեզ, ՀՀ եւ ԼՂՀ դիրքորոշումներում կա՞ն սկզբունքային տարբերություններ:

-Ռազմավարական հեռանկարը, կարծում եմ, նույն կերպ է պատկերացվում. երկու դեպքում էլ շեշտվում է Լեռնային Ղարաբաղի անկախության, Հայաստանի հետ ընդհանուր սահմանի, անվտանգության երաշխիքների կարելությունը: Բայց պետք է ընդունել, որ Հայաստանը, որպես միջազգային ընկերակցության անդամ, ունի որոշակի պարտավորություններ: Այդ շրջանակներում Հայաստանի արտաքին քաղաքականությունը, բնականաբար, չի կարող այնքան հավակնոտ լինել, որքան ցանկալի է: Միաժամանակ, կարծում եմ, որ կարգավորման շուրջ տեսակետների բազմազանությունը հնարավորություն է ընձեռում ավելի ճկուն արտաքին քաղաքականություն իրականացնել:

-ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, չժխտելով դարաբաղյան կողմի մասնակցության անհրաժեշտությունը, հավաստել են, որ դա կլինի Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցումից հետո: Մեզ համար ընդունելի՞ է միայն այդ փուլից բանակցային գործընթացին մասնակցելը, թե՛ մեր իշխանությունները, դարաբաղյան կողմի մասնակցության մասին խոսելիս, նկատի ունենին բանակցային գործընթացն ամբողջությամբ:

-Իմ կարծիքով, կարգավորման հեռանկարի շուրջ ներկա հետաքրքրությունը նկատելիորեն չափազանցված է: Դա, երեւի թե, ունի բացատրություն, բայց ես չէի ցանկանա ծավալվել: Խնդիրն այն է, որ բանակցություններին մասնակցել՝ չի նշանակում սեփական դիրքորոշումը դարձնել անվերապահորեն ընդունելի: Այստեղ ավելի առաջնային է պատասխանատվության հանգամանքը:

-Նորերս հրապարակվեցին դարաբաղյան կարգավորման հիմնարար սկզբունքները: Առաջին սկզբունքը նախատեսում է ազատագրված տարածքների հանձնումը Ադրբեջանի վերահսկողությանը: Դուք հնարավոր համարո՞ւմ եք դեպքերի նման զարգացում եւ նշյալ տարածքներից մեր գործերի դուրսբերում:

-Դատելով Ադրբեջանի պահվածքից, կարելի է հանգիստ խղճով արձանագրել, որ սկզբունքների շուրջ համաձայնության գալու հավանականությունը չափազանց նվազ է: Իսկ եթե սկզբունքները լիովին չեն համաձայնեցվում, ապա դրանցից մեկի մասին դատողությունները վերածվում են մտավարժանքի: Մենք անարդյունավետ ենք համարում այս հարթությունում բանավեճ մղել: Ակնհայտ է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չի կարող քննարկել Ադրբեջանին հուզող որեւէ հարց, եթե չկա հանդիպակաց ըմբռնում:

-Երբ խոսք է գնում ազատագրված տարածքների մասին՝ ԼՂՀ իշխանությունները, որպես կանոն, բերում են Քաշաթաղի եւ Քարվաճառի (Շահումյանի) շրջանների օրինակը: ԼՂՀ ղեկավարությունն ունի՞, արդյոք, նախկին Ադղամի, Ֆիզուլու եւ Ջեբրայիլի շրջանների լիարժեք բնակեցման ծրագիր:

-Այդ խնդրի լուծումը գտնվում է տնտեսական ներուժի հարթությունում: Քաղաքական կամքի եւ ցանկության պակաս չկա:

-ԼՂՀ անկախության հռչակումից ի վեր 18 տարի է անցել: Դիվանագիտական ի՞նչ աշխատանք է տարվել ու տարվում նորանկախ երկրի միջազգային ճանաչման ուղղությամբ: Ըստ Ձեզ, որքանո՞վ էր նպատակահարմար ԼՂՀ ճանաչումը որոշակի առումով կախման մեջ դնելը բանակցային գործընթացից: Կարծիք կա, որ շատ ավելի արդյունավետ կլինե՞ր այս երկու ուղղությունների համատեղումը՝ շեշտը դնելով հենց ճանաչման վրա:

-Փորձագիտական մակարդակով այդ վարկածը նոր չէ, որ շրջանառվում է: Կարգավորման տրամաբանությունը մեզ համար մի ճանապարհ է, որը տանում է ԼՂՀ անկախության համաձայնեցված

ճանաչման: Եւ մենք պետք է պաշտպանենք այդ դինամիկան: Վերջերս մեկ այլ առիթով շեշտել եմ այս միտքը, կրկնեմ նաեւ այստեղ. մեր պարագայում կարգավորումն ունի պատմական հաշտության հասնելու իմաստ: 20-րդ դարասկզբին կար հնարավորություն, որպեսզի երկու ժողովուրդները հրաժեշտ տային անցյալի ցավալի հիշողություններին: Այն չօգտագործվեց: Եւ մենք իրավունք չունենք եկող սերունդներին փոխանցել նույն անհանդուրժողականությունը: Իհարկե, դա ամենից առաջ Ադրբեջանի հնարավորությունն է, որի չիրացման այլընտրանքը կլինի միջազգային հանրության կողմից ներկա փաստացի սահմաններում ԼՂՀ անկախության ճանաչումը:

Մեզ համար զիջումների ամենացածր նշաձողն այն է, որը ոչ մի կերպ Արցախի եւ նրա ժողովրդի անվտանգության նկատմամբ սպառնալիքներ չի կրում

Գեորգի ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԼՂՀ արտգործնախարար

-Պարոն նախարար, հետադարձ հայացք ձգելով դարաբաղյան հիմնախնդրի քաղաքական կարգավորման բանակցային գործընթացի անցած ողջ ժամանակահատվածի վրա՝ Ձեր կարծիքով, կարգավորման որ տարբերակն է (եր) առավելա համապատասխանում մեր երկրի շահերին:

-Իմ համոզմամբ, Արցախի շահերին համապատասխանող կարգավորման տարբերակը դեռ պետք է մշակվի: Այն պետք է հիմնված լինի փաստացի իրադրության վրա, որպեսզի տարածաշրջանում ապահովվի հաստատուն խաղաղություն եւ կայունություն:

-Վերջերս ԼՂՀ Ազգային ժողովում կառավարության հետ հարցուպատասխանի ժամանակ Դուք հայտարարել էիք, որ մադրիդյան սկզբունքներն անընդունելի են մեզ համար: Արդյո՞ք միանշանակ կարելի է պնդել, որ դա մեր երկրի իշխանությունների պաշտոնական դիրքորոշումն է :

-Առաջին հերթին կցանկանայի ճշգրտել, որ Ազգային ժողովում լսումների ժամանակ իմ կողմից հայտարարություն է արվել այսպես կոչված «մադրիդյան սկզբունքների» մի քանի կետերի չընդունելու մասին: Հետագայում այս դիրքորոշումը հաստատվել է ԼՂՀ ԱԳՆ ս.թ. հուլիսի 15-ի հայտարարության մեջ, որտեղ նշվում է խեղաթյուրված բանակցային գործընթացի վերաբեռնավորման, բանակցային սեղանին ԼՂՀ՝ որպես բանակցային գործընթացի լիիրավ կողմի վերադարձի եւ հիմնարար սկզբունքների ձեւափոխության անհրաժեշտության մասին: Սա էլ հենց մեր պաշտոնական դիրքորոշումն է:

-Նորերս Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Մեթյու Բրայզան ասաց, որ 1998 թվականին հայաստանի իշխանությունը որոշեց Ադրբեջանի հետ բանակցություններ վարել նաեւ Լեռնային Ղարաբաղի անունից: Արդյո՞ք դա այդպես է, եւ կա՞, արդյոք, փաստաթուղթ, որով ԼՂՀ այն ժամանակվա ղեկավարությունը ՀՀ կառավարությանն է պատվիրակել Արցախի անունից բանակցելու իրավունքը, թե՞ դա արվել է նրա լուր համաձայնությամբ: Տասը տարի անց որքանո՞վ է նպատակահարմար թվում նման դիրքորոշումը:

-Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է դիմել նախապատմությանն ու իրադարձությունների հաջորդականությանը, որոնք հանգեցրին նրան, որ Արցախը դուրս մնաց ուղղակի բանակցություններից: Մինչեւ 1997թ. ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության բանակցային գործընթացը բազմիցս

ձեռնարկով է. եղել են ինչպես Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ՝ երկկողմ, այնպես էլ Ստեփանակերտ-Երեւան-Բաքու եռակողմ հանդիպումներ:

Լրիվ ձեռնարկով բանակցությունները դադարել են 1996թ. Լիսաբոնյան գագաթնաժողովում Գործող նախագահի հայտարարությունից հետո, որտեղ Մինսկի խմբի համանախագահներին առաջարկվել են սկզբունքներ՝ որպես կարգավորման հիմք: Այդ սկզբունքները բանակցային գործընթացը կանգնեցրել են փակուղու առաջ, չնայած այն բանի, որ ձեռնարկներն 1997թ. սկզբներին տեղի է ունեցել կողմերի լրիվ ձեռնարկով վերջին հանդիպումը, որտեղ հայկական կողմերից հայտարարություն է արվել այդ սկզբունքները չընդունելու եւ դրանց հիման վրա բանակցությունները շարունակելու անհեռանկարայնության մասին: Բանակցություններում ընդմիջում սկսվեց, որը շարունակվեց ավելի քան երկու տարի, որի ընթացքում Մինսկի խմբի համանախագահները մաքոքային այցելություններ կատարեցին Ստեփանակերտ, Երեւան եւ Բաքու: Ստեղծված անելանելի իրավիճակից դուրս գալու համար միջնորդներն ակտիվորեն սկսում են հնարավորություններ փնտրել կողմերի միջեւ կապերի վերականգնման համար, մասնավորապես, Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների միջեւ՝ տարբեր միջազգային գագաթնաժողովների շրջանակներում, որոնց երկու նախագահներն էլ մասնկացում էին: Նրանց միջեւ առաջին հանդիպումը տեղի ունեցավ 1999թ. ապրիլի 25-ին՝ Վաշինգտոնում՝ ՄԱԿ-ի հորեյանական գագաթնաժողովի շրջանակներում: Այսպիսով, կարելի է արձանագրել, որ լրիվ ձեռնարկով բանակցությունների դադարեցմանը հանգեցրեց հանգամանքների մի ամբողջություն: Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ չկա որեւէ փաստաթուղթ, ըստ որի մեզ հանել են բանակցային գործընթացից:

-ԼՂՀ ղեկավարությունը քանիցս հայտարարել է, որ առանց Լեռնային Ղարաբաղի կողմի մասնակցության բանակցային գործընթացը չի կարող արդյունավետ լինել: Մինչդեռ գործընթացը շարունակվում է առանց մեր մասնակցության, եւ Հայաստանը շարունակում է խոսել նաեւ ԼՂՀ անունից: ԼՂՀ իշխանությունները մտադի՞ր են կոնկրետ քայլեր ձեռնարկել այս ուղղությամբ:

-Առաջին հերթին կցանկանայի նշել, որ մենք բարձր ենք գնահատում Հայաստանի ջանքերը՝ որպես Արցախի անկախության եւ անվտանգության երաշխիք, որը ձեռնարկվում է միջնորդների հետ միասին ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության գոտում խաղաղության եւ կայունության պահպանման համար: Սակայն հակամարտության կարգավորմանը, նրա սկզբունքների մշակմանն անհնարին կլինի համապարփակ բնութագիր տալ առանց պաշտոնական Ստեփանակերտի լիարժեք մասնակցության: Մենք այդ հարցը բազմիցս առաջադրել ենք միջնորդների առջեւ՝ պնդելով լրիվ ձեռնարկով բանակցությունները շուտափույթ վերականգնելու անհրաժեշտությունը: Այդ հարցն ամենալուրջ կերպով բարձրացվում է Երեւանի եւ Ստեփանակերտի միջեւ խորհրդատվությունների ժամանակ:

-Դատելով մամուլի հրապարակումներից՝ ՀՀ եւ ԼՂՀ դիրքորոշումներում սկզբունքային տարբերություններ կան: Ըստ Ձեզ, դա համապատասխանու՞մ է իրականությանը:

-Ոչ մի կասկած չկա, որ Արցախը եւ Հայաստանը ձգտում են այնպիսի կարգավորման, որը լրիվությամբ կհամապատասխանի մեր շահերին եւ Արցախում հայկական պետականության ապագայի նկատմամբ չի ունենա գաղտնի ապառնայիքներ: Մենք ունենք ընդհանուր նպատակ: Սակայն մենք կարող ենք տարբեր հայացքներ ունենալ մեր առջեւ դրված նպատակին հասնելու ուղիների եւ, համապատասխանաբար, միջնորդների այս կամ այն առաջարկությունների վերաբերյալ:

-ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները, չժխտելով դարաբաղյան կողմի մասնակցության անհրաժեշտությունը, հավաստել են, որ դա կլինի Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցումից հետո: Մեզ համար ընդունելի՞ է միայն այդ փուլից

բանակցային գործընթացին մասնակցելը, թե՛ մեր իշխանությունները դարաբաղյան կողմի մասնակցության մասին խոսելիս նկատի ունենին բանակցային գործընթացն ընդհանրապես:

-Պաշտոնական Ստեփանակերտը բազմիցս հայտարարել է, որ մեզ համար ընդունելի է համարվում բանակցություններին մասնակցել միայն որպես լիիրավ կողմ՝ առաջարկությունների մշակման բոլոր փուլերում՝ ուղղված հակամարտության կարգավորմանը, որտեղ Արցախը Ադրբեջանի հետ միասին հանդիսանում են որպես հիմնական կողմեր, քանի որ այն բխում է նաև Ադրբեջանի եւ ԼՂՀ միջեւ հակամարտության առաջացման պատմությունից:

-ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի կարծիքով մտահոգիչն այն է, որ հայտնի չէ, թե բանակցություններում ինչպիսի նշաձող է դրվել Ղարաբաղի հարցի լուծման, եւ որն է ՀՀ կողմից զիջումների նշաձողը: Բսկ դարաբաղյան կողմն ունի՝ նման նշաձող:

-Մեզ համար զիջումների ամենացածր նշաձողն այն է, որը ոչ մի կերպ Արցախի եւ նրա ժողովրդի անվտանգության նկատմամբ սպառնալիքներ չի կրում: Ներկա փուլում պետականության, անվտանգության անհրաժեշտ մակարդակն ապահովվում է շնորհիվ ստատուս-քվոյի պահպանման: Տեսանելի ապագայում բավականաչափ անվտանգության ապահովման այլընտրանքային մեխանիզմ մենք չենք տեսնում:

-ԼՂՀ անկախության հռչակումից ի վեր 18 տարի է անցել: Դիվանագիտական ի՞նչ աշխատանք է տարվել ու տարվում նորանկախ երկրի միջազգային ճանաչման ուղղությամբ: Ըստ Ձեզ, որքանո՞վ էր նպատակահարմար ԼՂՀ ճանաչումը որոշակի առումով կախման մեջ դնելը բանակցային գործընթացից: Կարծիք կա, որ շատ ավելի արդյունավետ կլիներ այս երկու ուղղությունների համատեղումը՝ շեշտը դնելով հենց ճանաչման վրա:

-Լիովին համաձայն եմ այն դրույթի հետ, որ ԼՂՀ ճանաչման գործընթացն ու ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացը պետք է լինեն առանձնացված: Արցախի անկախ կարգավիճակը, որն արտահայտված է 1991թ. հանրաքվեում, չի կարող սակարկության խնդիր լինել կամ կախված լինել բանակցությունների արդյունքներից: Բանակցությունների նպատակը պետք է լինի Արցախի եւ Ադրբեջանի, Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ եթե ոչ բարիդրացիական, ապա գոնե առանց հակամարտությունների հարաբերությունների ստեղծումը: Դրա համար բանակցությունների օրակարգում պետք է առկա լինեն հարցեր զինադադարի ռեժիմի ամրապնդման, Ադրբեջանի եւ Արցախի միջեւ սահմանային գոտում պատահարների կանխմանն ուղղված մեխանիզմների հաստատման, հակամարտությունից առաջին տուժածները դարձած Ադրբեջանից հայ փախստականների իրավունքների վերականգնման եւ այլնի մասին:

ԼՂՀ արտաքին գործերի նախարարության հայտարարությունը

Ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ վերջին զարգացումների կապակցությամբ ԼՂՀ արտաքին գործերի նախարարությունն անհրաժեշտ է համարում հանդես գալ հետեւյալ հայտարարությամբ.

ԼՂՀ դիրքորոշումն ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ մնում է անփոփոխ: Անհնար է հասնել հակամարտության կարգավորմանը՝ անտեսելով առկա իրողությունները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն անցյալ վերադարձնելու ցանկացած փորձ ոչ միայն անարդյունավետ է, այլև հղի է հակամարտության նոր սրացումով: Բանակցություններում իրական առաջընթացի հնարավոր է հասնել միայն բանակցային գործընթացի բոլոր փուլերին դարաբաղյան կողմի

լիարժեք մասնակցությամբ:

Ցանկացած համաձայնություն, որը շոշափում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շահերը, ճակատագիրը եւ ապագան, չի կարող ընդունվել առանց այդ երկրի ժողովրդի եւ նրա ճակատագրի համար անմիջական պատասխանատվություն կրող ղեկավարության մասնակցության:

Հույս ունենք, որ խաղաղ կարգավորման մեջ շահագրգիռ դերակատարները թույլ չեն տա տարածաշրջանի ստատուս քվոյի խախտումը՝ որպես հետեւանք կարգավորման ներկայիս բանաձեւի հիման վրա բանակցային գործընթացի արագացման:

Ելնելով վերոնշյալից՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է խեղաթուրված բանակցային գործընթացի վերաբեռնավորում, որպես բանակցային գործընթացի լիիրավ կողմ, ԼՂՀ վերադարձ բանակցությունների սեղանի շուրջ եւ կարգավորման հիմնարար սկզբունքների փոխակերպում:

15 հուլիսի, 2009թ.

Մեզ համար կարգավորումն ամուր եւ երկարատեւ խաղաղության հաստատումն է, ինչին հնարավոր է հասնել միայն փաստացի իրադրությունները հաշվի առնելով

ՂՀ արտաքին գործերի նախարարության տեղեկատվական վարչության պետ Մարսել Պետրոսյանը պատասխանել է ԶԼՄ-ների հարցերին՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Մեթյու Բրայզայի վերջին հայտարարությունների առնչությամբ

- Ինչպե՞ս կմեկնաբանեիք ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահի պնդումն առ այն, որ Լեռնային Ղարաբաղի «բնակչության» կարծիքը, նրա մտավախություններն արտացոլվում են բանակցային գործընթացում:

- Մենք կողջունենք այդ փաստը եւ այս կապակցությամբ կցանկանայինք հիշեցնել միջնորդներին, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովուրդն արտահայտել է իր կամքը 1991թ. դեկտեմբերի 10-ին՝ անկախության եւ 2006թ. դեկտեմբերի 10-ին՝ ԼՂՀ Սահմանադրության հանրաքվեների ժամանակ: Մենք երախտապարտ կլինենք միջնորդներին, եթե հանրաքվեների ժամանակ ԼՂՀ ժողովրդի արտահայտած կամքը լրիվությամբ արտացոլվի բանակցային գործընթացում:

- Ինչպե՞ս կմեկնաբանեիք ԵԱՀԿ ՄԻՄ ամերիկացի համանախագահի վերջին հայտարարությունները, որոնցում ներկայացված են ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման՝ միջնորդների կողմից առաջարկվող սկզբունքների մանրամասները: Մ. Բրայզան նշել է նաեւ, որ ղարաբաղյան հակամարտության արագ կարգավորումը, իր կարծիքով, ձեռնտու է Հայաստանին, քանի որ հակառակ դեպքում կբարդանա հանրապետության տնտեսական զարգացումը, ինչն իր հերթին խնդիրներ կստեղծի ժողովրդավարական բարեփոխումների անցկացման հարցում:

- Առաջին հերթին կցանկանայի նշել, որ ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության արագ կարգավորումը գերակա խնդիր է նաեւ ԼՂՀ համար: Սակայն դա չի նշանակում, որ մենք համաձայն ենք ցանկացած գնով կարգավորման՝ այն էլ անկանխատեսելի հետեւանքներով: Մեզ համար կարգավորումն ամուր եւ երկարատեւ խաղաղության հաստատումն է, ինչին հնարավոր է հասնել միայն փաստացի իրադրությունները հաշվի առնելով:

Սակայն պարոն Բրայզայի մոտ կարգավորման խնդիրը շաղկապված է տնտեսական զարգացման եւ ժողովրդավարական բարեփոխումների հարցերի հետ: Այս հարցերի շաղկապումը միասնական

«փաթեթի» մեջ ավելի շուտ առեւտուր եւ ցանկացած գնով համաձայնություն պարտադրելու փորձ է հիշեցնում:

Ցավոք, վերջերս ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի արագացման միտում է նկատվում՝ ինչպես հակամարտության էությունը, պատմությունը, այնպես էլ ներկայիս իրողություններն անտեսող բանաձեւի հիման վրա: Եւ պարոն Բրայզայի հայտարարությունները, մեր կարծիքով, նշված միտման հենքով են ընթանում: Այնպիսի սպավորություն է ստեղծվում, որ այս շտապողականությունը կապված է ԵԱՀԿ ՄԽ որոշ համանախագահների, մասնավորապես պարոն Բրայզայի ազդարարվող փոխարինման հետ: Ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ ԱԳՆ ս.թ. հուլիսի 15-ի հայտարարության մեջ, բանակցային գործընթացի չհիմնավորված արագացումը բացասական հետեւանքներ կունենա եւ կհանգեցնի միայն լարվածության ուժեղացմանը, քանի որ միջնորդների առաջարկած բանաձեւն ուղղված է տարածաշրջանում կայունության եւ խաղաղության հիմքում ընկած ուժերի հավասարակշռության փոփոխությանը:

- Մ.Բրայզայի խոսքերով, ԵԱՀԿ ՄԽ համանախագահներն առաջարկում են, որպեսզի ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության գոտում խաղաղապահները զինված չլինեն, դիտորդների դեր կատարեն եւ չկարողանան խաղաղության հարկադրել: Ինչպես նշել է ամերիկացի համանախագահը, դա պայմանավորված է նրանով, որ Կոստվոյի եւ Բոսնիայի փորձը ցույց է տվել, որ խաղաղապահ ուժերը ի վիճակի չեն կանխել զինված հակամարտությունը, եթե հակամարտության կողմերից մեկը դա չի ցանկանում: Ձեր մեկնաբանությունը, խնդրեմ:

-Իր խոսքերով պարոն Բրայզան, ըստ էության, խոստովանեց, որ միջնորդների առաջարկած հակամարտության կարգավորման հիմնական սկզբունքներից մեկը՝ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անվտանգությունը, չի կարող իրագործվել, որ միջազգային հանրությունն ի վիճակի չէ կարգավորման առաջարկվող բանաձեւի իրականացման դեպքում լիովին երաշխավորել ԼՂՀ ժողովրդի անվտանգությունը, քանի որ խաղաղապահ ուժերը հակամարտության կողմերի կառավարման հիմնական գործիքներից մեկն են՝ հակամարտության տարածաշրջաններում խաղաղության պահպանման՝ միջազգային հանրության զինանոցում: Սակայն քննության առնելու պարագայում պարզվում է, որ դրանք այնքան էլ արդյունավետ չեն, եթե հակամարտության կողմերից մեկը խաղաղություն չի ցանկանում:

Սակայն ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում այս խնդիրը ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի համանախագահն առաջարկում է լուծել ագրեսորի՝ Ադրբեջանի հանդարտեցման միջոցով: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, նման քաղաքականությունը ոչ մի կերպ չի նպաստում խաղաղության հաստատմանը: Ընդհակառակը, այն հանգեցնում է լարվածության ուժեղացման ու պատերազմի:

ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայություն

Արցախի մի շարք քաղաքական կուսակցությունների հայտարարությունը

Արցախի քաղաքական կուսակցությունները, որպես Արցախի ժողովրդի քաղաքական մտքի եւ կամքի հիմնական արտահայտողներ, հավատարիմ մնալով Արցախի անկախ պետականության սկզբունքներին, որոնք արտահայտվել են միջազգային ճանաչված չափանիշներով՝ 1991 թվականի համաժողովրդական եւ 2006 թվականի Սահմանադրության ընդունման հանրաքվեներով, հաստատում են, որ ԼՂՀ-ի դուրս մղումը բանակցային գործընթացից, ինչպես նաեւ ԼՂՀ փաստացի պետականության անտեսումը եւ հակամարտության հանգուցալուծման նկատմամբ խտրական մոտեցումների դրսեւորումները, ներկա փուլում ձախողման են դատապարտել ադրբեջանա-դարաբաղյան հակամարտության կարգավորման

ջանքերը:

Վերը նշված հաստատումից ելնելով՝ մեկ անգամ եւս պահանջում ենք.

- հարգել ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման իրավունքը՝ ապահովելով ԼՂՀ-ի լիիրավ մասնակցությունը հակամարտության կարգավորման գործընթացին.

- չխաթարել ԼՂՀ ժողովրդի անվտանգությունը, որի հիմնական երաշխիքը ԼՂՀ անկախ պետականությունն է ու ԼՂՀ Սահմանադրությամբ ամրագրված տարածքային ամբողջականությունը:

Մենք համոզված ենք, որ վերոհիշյալ պահանջները չիրականանալու դեպքում վտանգի է ենթարկվում մինչ այժմ խաղաղ պայմաններում ամրագրված տարածաշրջանային հավասարակշռությունը, որի խախտման հետեւանքով ապագա ոչ ցանկալի զարգացումների ողջ պատասխանատվությունը ընկնում է միջազգային հանրության եւ հատկապէս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարության վրա:

ԼՂՀ քաղաքական կուսակցությունները զորակցություն հայտնելով ԼՂՀ իշխանություններին եւ պաշտպանելով ԼՂՀ ԱԳՆ 2009 թվականի հուլիսի 15-ի հայտարարությունը, կոչ են անում Արցախի բնակչությանը ցուցաբերել միասնականություն, վճռակամություն եւ զգոնություն:

«Ազատ Հայրենիք» կուսակցություն
Արցախի ժողովրդավարական կուսակցություն
«Արցախի Արմենական» կուսակցություն
ԼՂՀ կոմունիստական կուսակցություն
ՀՅԴ Արցախի կենտրոնական կոմիտե
«Շարժում-88» կուսակցություն
«Բարոյական վերածնունդ» կուսակցություն
«Մեր տունը Հայաստանն է» կուսակցություն

16 հուլիսի, 2009-թ.
ք. Ստեփանակերտ
13.08.09.

ԼՂՀ ոչ կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ) հայտարարությունը

Ընդունված ԼՂՀ ՈԿԿ արտակարգ ժողովի ժամանակ

Հուլիսի 16, 2009թ.

Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ վերջին իրադարձությունների կապակցությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական հասարակությունը՝ ի դեմս ոչ կառավարական կազմակերպությունների առաջնորդների եւ հասարակական փորձագետների անհրաժեշտ է համարում հայտարարել.

Միջնորդ երկրների բարձրաստիճան պաշտոնյաների վերջին հայտարարությունները մադրիդյան սկզբունքների հիման վրա հակամարտության կարգավորման վերաբերյալ արմատապես հակասում են Արցախի եւ Հայաստանի շահերին եւ արտացոլում են միայն այդ երկրների շահերը, որոնք, ըստ

երեւույթին, միշտ համընկնում են Ադրբեջանի շահերի հետ:

Մենք՝ ԼՂՀ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներս, կարգավորման մեզ պարտադրվող տարբերակը գնահատում ենք որպես անօրինական, անարդար, անբարոյական եւ կործանարար ամբողջ հարավ-կովկասյան տարածաշրջանի համար:

Իրավիճակը հակամարտության տարածաշրջանում կրկին ծայրաստիճան լարվածության է հասցվել: Դա հղի է անկանխատեսելի հետեւանքներով: Վտանգված է ԼՂ ու ՀՀ, հետեւաբար նաեւ ողջ տարածաշրջանի անվտանգությունը:

Միջնորդների կողմից ԼՂՀ քաղաքացիների օրինական իրավունքների եւ առկա իրողությունների բացարձակ անտեսումը բազմիցս հակամարտության տարածաշրջանում իրավիճակի ապակայունացման պատճառ է դարձել:

Կարծում ենք, որ ադրբեջանա-ղարաբայան հակամարտության կարգավորման շուրջ բանակցային գործընթացն առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության ապացուցել է իր բացարձակ անկարողությունը. այս կապակցությամբ կոչ ենք անում բանակցային գործընթացի միջնորդներին եւ մասնակիցներին վերջ տալ այս քաղաքական ֆարսին եւ ադրբեջանա-ղարաբայան հարաբերությունների կարգավորման հիմք ընդունելով առկա իրողությունը, արմատապես վերանայելով ներկայիս ձեւաչափը եւ բանակցությունների հիմնարար սկզբունքները՝ վերջապես զբաղվել իրական խաղաղարար գործունեությամբ, այլ ոչ թե հակամարտության հերթական գալարի արձակմամբ:

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի կողմից իրականացվող խտրականության քաղաքականության դեմ 20 տարի առաջ ըմբոստացած Արցախի ժողովուրդը մեկընդմիշտ որոշել է իր ճակատագիրը՝ բոլոր իրավական նորմերի եւ ձեւաչափերի անթերի պահպանմամբ համազգային հանրաքվեի հիման վրա ԼՂՀ անկախությունը հռչակելով: Դիմագրավելով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության լիակատար ոչնչացմանն ուղղված Ադրբեջանի ռազմական ագրեսիային՝ Արցախի ժողովուրդը պաշտպանել է սեփական ազատ պետության մեջ ապրելու իր իրավունքը:

ԼՂՀ Սահմանադրությունը միակ անխախտելի օրենքն է, որին հետեւել եւ շարունակելու է հետեւել Արցախի ժողովուրդը: Արտաքին ուժերի ցանկացած փորձ խախտելու ԼՂՀ Հիմնական Օրենքը, որով ամրագրված են նաեւ ազատագրված տարածքները, դատապարտված է: ԼՂՀ պաշտպանության բանակը, տասնյակ հազարավոր պահեստայիններն ու ամբողջ աշխարհի հայ կամավորականները պետական սահմանների անձեռնմխելիության, Արցախի ժողովրդի կյանքի, իրավունքների եւ ազատությունների հիմնական երաշխիքն են:

Մենք պատրաստ ենք շարունակել բանակցությունները եւ աշխատել տարածաշրջանում խաղաղություն հաստատման ուղղությամբ, սակայն ոչ սեփական անվտանգության եւ ազատության գնով, որի համար կյանքով են հատուցել ոչ միայն հազարավոր մարտիկներ, այլեւ խաղաղ բնակիչներ՝ կանայք, երեխաներ, ծերեր: Նրանց հիշատակը մեր արժանապատվությունն է:

Խաղաղ կարգավորման պլատֆորմն առուծախի վաճառասեղան չէ: Ազատությունն ու Արժանապատվությունը ապրանք չեն:

Մենք հիշեցնում ենք, որ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ որեւէ համաձայնագիր չի կարող օրինական ուժ ունենալ, եթե այն չի արտացոլում ԼՂՀ քաղաքացիների կամքն ու օրինական իրավունքները, եւ եթե այդ փաստաթղթի տակ չկա ԼՂՀ ընտրված նախագահի ստորագրությունը: Զրպարտություններն անօգուտ են եւ ապարդյուն:

Մենք գտնում ենք, որ անհրաժեշտ է ոչ միայն պաշտոնական քաղաքական գնահատական տալ տեղի ունեցող բանակցություններին, այլեւ արդեն ժամանակն է պատասխանատվության ենթարկել նրանց,

ովքեր թույլ են տվել բանակցությունների ընթացքի զարգացումն այն սցենարով, որն արդյունքում վտանգել է ոչ միայն մարդկանց կյանքը եւ հայկական պետականությունը որպէս այդպիսին, այլեւ՝ ամբողջ տարածաշրջանի անվտանգությունը, ինչպէս նաեւ ամբողջ աշխարհի հայերի եւ Հայաստանի ու Արցախի բարեկամների շահերը:

Հետայսու հիշեցնում ենք այն պաշտոնատար անձանց, կառույցներին եւ այլ հաստատություններին, որոնք իրենց իրավասու են համարում որոշել ամբողջ տարածաշրջանի ճակատագիրը, որ անձնապէս պատասխանատու են եւ՝ ամբողջ աշխարհի հայության առջեւ, եւ՝ տարածաշրջանում բնակվող մարդկանց կյանքի համար:

Մեր իրավունքն անկապտելի է, մեր կամքը՝ անհողորդ:

Էլլադա Սահակյան՝ հասարակական փորձագետ
Իրինա Գրիգորյան՝ Ժողովրդական դիվանագիտության ինստիտուտ
Տարոն Հակոբյան՝ «Վերածնված հայրենիք»
Երվանդ Հաջիյան՝ «Հայկի սերունդ»
Հասմիկ Միքայելյան՝ «Մայրություն»
Լյուդմիլա Գրիգորյան՝ Հասարակական փորձագետ
Գագիկ Բադունց՝ Արցախի մտավորականության միություն
Գեորգի Սաֆարյան՝ Մարդու իրավունքների պաշտպանության Արցախի միություն
Սանասար Սարյան՝ ԼՂՀ փախստականների միություն
Աշոտ Ադամյան՝ Արցախի բժշկական միություն
Գայանէ Համբարձումյան՝ Կանանց ռեսուրս-կենտրոն
Ջուլիետտա Առստամյան՝ «Հարմոնիա» (ներդաշնակություն) ՈԿԿ
Ալբերտ Ոսկանյան՝ Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոն
Ալեքսանդր Հակոբջանյան՝ հասարակական փորձագետ
Գեորգի Սահակյան՝ հասարակական փորձագետ
Ստեփան Գրիգորյան՝ «Երիտասարդ քաղաքագետներ»
Մասիս Մայիլյան՝ Արտաքին քաղաքականության եւ անվտանգության հանրային խորհուրդ
Գալինա Առստամյան՝ Ջոհված ազատամարտիկների հարազատների միություն

Հայտարարությունը բաց է ստորագրությունների համար

Ղարաբաղի երիտասարդության ներկայացուցիչների հայտարարությունը

Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ վերջին զարգացումների կապակցությամբ ԼՂՀ երիտասարդական կազմակերպությունները եւ ուսանողական միավորումներն անհրաժեշտ են համարում հանդես գալ հետևյալ հայտարարությամբ.

«Մենք՝ ԼՂՀ երիտասարդության եւ ուսանողության ներկայացուցիչներս, ղարաբաղա-ադրբեջանական հակամարտության կարգավորման այսպէս կոչված մադրիդյան սկզբունքների առնչությամբ հարկ ենք համարում նշել մեր վճռորոշ դիրքորոշումը:

Հակամարտության կարգավորման՝ մեզ պարտադրվող տարբերակը որակում ենք անարդար եւ մեր ժողովրդի ու պետականության շահերին լիովին հակասող:

Մենք՝ Անկախության սերնդի ներկայացուցիչներս, որ տեր ենք Արցախում ձեւավորված եւ ստեղծվելիք

արժեքներին, պետականությանը եւ ժողովրդավարությանը, համոզված ենք, որ հակամարտության կարգավորման շուրջ տարվող բանակցություններն առանց ԼՂՀ լիարժեք եւ իրավահավասար մասնակցության լիովին անպտուղ են եւ որեւէ վերջնական արդյունք չեն կարող ունենալ, ուստի եւ միջազգային միջնորդներին կոչ ենք անում վերականգնել բանակցությունների արդարացի ձեւաչափը, որը հնարավորություն կտա առաջ մղել կայուն խաղաղություն հաստատելու ջանքերը:

Ավելի քան 21 տարի առաջ ադրբեջանական խտրական քաղաքականության դեմ միասնաբար հանդես եկած, իսկ այնուհետեւ՝ մարտի դաշտում իր ազատ ու անկախ ապրելու իրավունքն առմիջտ վաստակած արցախցիներ արդեն 18 տարի է՝ ազգերի ինքնորոշման հիմնարար իրավունքով ստեղծել է միջազգային ժողովրդավարական բոլոր նորմերին համապատասխանող պետություն, որի իրավական կարգավիճակն ու տարածքային ամբողջականության անխախտելիությունն ամրագրված են Սահմանադրությամբ:

Մենք ողջունում ենք հարավկովկասյան տարածաշրջանում խաղաղության ապահովմանն ուղղված միջնորդական ջանքերը, սակայն մեկ անգամ եւս հիշեցնում ենք, որ Արցախի ճակատագրին եւ շահերին առնչվող ցանկացած համաձայնություն, որ տեղի կունենա առանց ԼՂՀ մասնակցության, չի կարող ընդունվել մեր կողմից»:

ԼՂՀ երիտասարդական եւ ուսանողական կառույցների ներկայացուցիչներ

18 հուլիսի, 2009թ.
ք. Ստեփանակերտ

Եթե որեւիցե մեկը կողմ է նոր հանրաքվեի, ապա պիտի հասկանա, որ դրանով իսկ ջնջում է մեր այս 18 տարվա գոյությունը

Ժաննա ԳԱՍՏՅԱՆ

Ղարաբաղյան շարժման առաջամարտիկ
Ստեփանակերտ

-Տիկին Գալստյան, ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ վերջին շրջանի քննարկումներում շատ է արծարծվում նոր հանրաքվեի անցկացման թեման: Ինչպե՞ս էք վերաբերվում Ղարաբաղում կրկնակի հանրաքվեի անցկացմանը:

-Նոր հանրաքվեն ամեն տեսանկյունից եւ ամեն առումով ամենամեծ անհեթեթությունն է, որ գոյություն ունի այդ մադրիդյան սկզբունքների մեջ: Էլ չեմ խոսում, որ դրանցում ընդհանրապես անվտանգության որեւէ երաշխիք չկա: Շատ եմ տեսել, որ քաղաքական գործիչները երջանիկ դեմքով խոսում են հանրաքվեի մասին իբրեւ ձեռքբերում: Եթե որեւիցե մեկը կողմ է նոր հանրաքվեի, ապա պիտի հասկանա, որ դրանով իսկ ջնջում է մեր այս 18 տարվա գոյությունը: Եթե դու նոր հանրաքվե ես անում, ապա ոչ միայն մեր անկախության հանրաքվեն ես կասկածի տակ առնում, այլ նաեւ դրան հաջորդած մեր բոլոր ընտրությունները՝ նախագահական, խորհրդարանական, տեղական ինքնակառավարման մարմինների եւ այլն, եւ ամենակարեւորը՝ մեր Սահմանադրության հանրաքվեն: Տրամաբանությունը դա է հուշում: Այսինքն, ուզում ես ասել, որ չկա՞ Արցախի Հանրապետությունը, որը գոյություն ունի, զարգանում է, իմիջիայլոք՝ շատ ավելի լավ, քան տարածաշրջանի որեւէ ճանաչված երկիր: Ուրեմն՝ այդ ամենը ջնջում ես, աչք ես փակում այդ ամենի վրա: Ես գտնում եմ, որ հանրաքվեն ինչ-որ տեղ մեզ համար ստորացուցիչ պետք է լինի, քանի որ դրանով մենք ինքներս մեր ձեռքով կջնջենք մեր պատմությունը, իրականությունը:

Մա՝ բարոյական կողմի մասին:

Եթե 1991-ին այստեղ բնակվող ադրբեջանցիները, որ շատ քիչ տոկոս էին կազմում, չեն մասնակցել հանրաքվեին, ընդամենը՝ իրենց իսկ կամքով, ապա մի թե դրանով կասկածի տակ է առնվում մեր հանրաքվեի իրավագործությունը, լեգիտիմությունը: Ի դեպ, Ադրբեջանի անկախության հանրաքվեն եւս անց է կացվել առանց Լեռնային Ղարաբաղի բնակչության մասնակցության (Լեռնային Ղարաբաղի հայերը հրաժարվել են մասնակցել, ինչպես հրաժարվել են այստեղի հանրաքվեին մասնակցել ադրբեջանցիները), էլ չեն ասում առանց Սուվգայիթի, Բաքվի եւ մյուս բնակավայրերի հայ բնակիչների, Բայց որեւէ մեկի մտքով անցնում է կասկածի տակ առնել Ադրբեջանի անկախությունը սոսկ այն պատճառով, որ հայերս չենք մասնակցել:

Հայաստանի քաղաքական էլիտայի ներկայացուցիչներից ոմանք խոսում են այն մասին, որ մեր զիջումը հենց այդ հանրաքվեին համաձայնվելն է: Բայց ես դա որպես զիջում չեմ ընկալում, այլ ընկալում եմ իբրեւ նահանջ, որը կասկածի տակ է դնում մեր հանրապետության գոյությունը: Մա իմ անձնական կարծիքն է, որն ինձ հետ կխոսում է ժողովուրդը, որովհետեւ երբ ասում են հանրաքվե, ապա մարդիկ քմծիծաղով հարցնում են՝ ի՞նչ հանրաքվե... Այդ մարդիկ շատ լավ են հիշում հանրաքվեի օրը, թե ինչ պայմաններում են մասնակցել քվեարկությանը, որին, ի դեպ, ներկա էին նաեւ դիտորդներ աշխարհի տարբեր ծայրերից: Եւ դա եղել է երեւի հետխորհրդային տարածքում ամենաժողովրդավարական հանրաքվեներից մեկը, ինչպես մեր բոլոր հետագա ընտրությունները:

-Հայաստանյան մամուլում հայ քաղաքական գործիչների կողմից հնչել է այն միտքը, որ հանրաքվեին ադրբեջանցիները կարող են մասնակցել իրենց բնակչության ներկայիս վայրերում:

-Ամեն դեպքում իմ կարծիքը մնում է նույնը՝ հանրաքվեի կարիք չկա: Եւ գտնում եմ, որ եթե Ղարաբաղի անկախությունը լեգիտիմ չէ, ապա Ադրբեջանին էլ է այդպիսին:

-Քննարկումների ժամանակ խոսվում է նաեւ կողմերի միջեւ վստահության մթնոլորտի ձեւավորման մասին: Դուք դա հնարավոր համարո՞ւմ եք:

-Մարդիկ խոսում են հենց այնպե՞ս՝ խոսելո՞ւ համար: Չե՞ որ գոյություն ունի իրականություն: Վստահության մթնոլորտի մասին խոսք չի կարող լինել միանգամայն հասկանալի պատճառներով. հրադադարից հետո ի՞նչ կա մեր ավագ ու երիտասարդ սերնդի հիշողության մեջ: Ես չեմ խոսում մեր սերնդի մասին, ովքեր պատերազմին մասնակցել են, այս մասին նույնիսկ ավելորդ է խոսել՝ ի՞նչ վստահություն կարող է լինել իմ եւ պատերազմի մասնակից ադրբեջանցու միջեւ: Չի կարող լինել: Բայց Ադրբեջանն ի՞նչ է արել, որպեսզի երիտասարդ սերունդն իրեն վստահի: Ադրբեջանական բանակի սպա Ռամիլ Մաֆարովը 21-րդ դարում իր յաթաղանային քստմենտի հոգեբանությամբ գործեց՝ կացնով սպանելով քնած հայ սպային: Մա՞ է մեր հիշողության մեջ: Կամ՝ Նոր Զուղայի խաչքարերի ավերո՞ւմը: Թե՞ մարտի 3-4-ին սահմանում տեղի ունեցած դեպքերը, երբ Հայաստանում քաղաքական փոքր խառնաշփոթ էր: Այս ամենի կապակցությամբ ողջ աշխարհը լռեց: Ու հիմա էլ այդ լռող աշխարհն ուզում է անհետք, անկապ ու ոչ հստակ ինչ-որ մադրիդյան սկզբունքներով մեզ ասել, որ կարող են երաշխավորել մեր անվտանգությունը:

-Իսկ ո՞րն է մեր անելիքն այդ դեպքում:

-Մեր անելիքն այն է, որ կարողանանք այս գործընթացում ներգրավված երկրների ներկայացուցիչներին, միջազգային հանրությանն ու համայն հայությանը հասանելի դարձնել, որ այս անհետք վիճակը չի կարող շարունակվել: Եթե իրապես կարգավորման ու կայունության են ձգտում Հարավային Կովկասում, ապա պիտի բոլոր հարցերը քննարկեն նաեւ մեզ հետ: Ես ուզում եմ, որ բոլորը խոսեն մեզ հետ: Ես բոլորովին չեմ կասկածում որեւէ մեկին Հայաստանում, առավել եւս նախագահին, Բայց գտնում եմ, որ մեր ճակատագիրը, մեր հարցերը եւ բոլոր մանրամասները մեզ հետ պիտի քննարկեն: Ադրբեջանը պիտի մեզ ճանաչի ու նոր միայն գա մեզ հետ հարցեր քննարկելու:

-Տիկին Գալստյան, գաղտնիք չէ, որ մադրիդյան սկզբունքների շարքում գոյություն ունի արդեն վաղուց արծարծվող մի հարց եւս՝ տարածքների հանձնման վերաբերյալ: Ըստ Ձեզ, մենք ունենք հանձնելու տարածք:

-Նայած ինչ տարածքի մասին է խոսքը:

-ԼՂՀ Սահմանադրությամբ ամրագրված ներկայիս տարածքի:

-Ես Արցախի Հանրապետության քաղաքացի եմ, ապրում ու գործում եմ համաձայն մեր Սահմանադրության, ու որեւէ քայլ Սահմանադրությունից դուրս չեմ անի: Եթե խոսում են հանրաքվեի մասին, ապա Արցախում հենց միայն այդ հարցով կարող է լինել հանրաքվե, որովհետեւ Սահմանադրության ցանկացած փոփոխություն կարող է լինել միայն հանրաքվեով: Այ դա հանրաքվեի հարց է:

-Պատերազմի վերսկսման մասին խոսակցությունները երբեք էլ չեն դադարում, հատկապես դրանով անընդհատ սպառնում է Ադրբեջանը: Դուք հնարավոր եք համարում ռազմական գործողությունների վերսկսումը:

-Ես ոչինչ չեմ բացառում: Եթե պատերազմ վերսկսվի, ապա դա նորից կլինի Ադրբեջանի նախաձեռնությամբ: Վերը նշված փաստերը՝ հայ սպային կացնով սպանելը, Ջուղայի խաչքարերի ավերումը եւ այլն, խոսում են Ադրբեջանի բանակի դիմագծի մասին: Ես Ադրբեջանի փոխարեն այդպիսի դիմագիծ ունեցող բանակով որեւէ պատերազմ չեի սկսի, որովհետեւ դրա արդյունքն ակնհայտ է: Բանակի հզորությունը միայն տեխնիկական հագեցվածության մեջ չէ, այլ բարոյահոգեբանական վիճակի: Ադրբեջանի գործելակերպը քնած մարդուն կացնով սպանելն է, բայց մենք քնած չենք լինելու պատերազմի ժամանակ, որ գան կացնով սպանեն մեզ:

Համենայնդեպս, այդ մասին պետք է շատ լուրջ մտածեն այն պետությունները, որոնք ուզում են, որ տարածաշրջանում կայունություն լինի: Այն սկզբունքները, որ իրենք ներկայացնում են, եթե անգամ իրագործվեն էլ, նույնիսկ ընդունելի լինեն Ադրբեջանի կողմից, որեւէ կերպ չեն նպաստի տարածաշրջանային կայունությանը: Դա միանշանակ է:

-Մեկ անգամ չէ, որ Ղարաբաղում հայտարարվում է այն մասին, որ մադրիդյան սկզբունքները մեզ համար անընդունելի են, սակայն Հայաստանը շարունակում է բանակցել այդ սկզբունքների շուրջ: Ի՞նչ կասեք այս մասին:

-Ինձ թվում է, որ դա էլ երկար չի տեւի, որովհետեւ այդ սկզբունքներն իրենց սպառել են, կամ արդեն սպառման եզրին են:

-Իսկ եթե Հայաստանը համաձայնի այդ սկզբունքներին, ի՞նչ պետք է անի Ղարաբաղը:

-Դա անհնարին է: Ինչպե՞ս կարող է Հայաստանի ղեկավարությունը հակառակվի ամբողջ հայության կամքին, բա էլ ո՞ւմ ղեկավարն է: Հնարավոր չէ դա:

Զրուցեց Անահիտ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ

ԼՂՀ-ն պիտի սահման ունենա Հայաստանի, Իրանի եւ Ադրբեջանի հետ

Ռազմիկ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ղարաբաղյան շարժման առաջամարտիկ

Ստեփանակերտ

-Պարոն Պետրոսյան, ինչպե՞ս եք գնահատում ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման շուրջ ընթացող բանակցությունների ներկա փուլը:

-Իմ կարծիքով, ընդհանրապես՝ սկսած Լեւոն Տեր-Պետրոսյանից մինչև Ռոբերտ Քոչարյան եւ Սերժ Սարգսյան, բանակցությունները սխալ հունով են ընթացել, նրանք իրավունք չունենին գնալ այդպիսի բանակցությունների: Իրավական ուժ ունի միայն 1994թ. հրադադարը, որ ստորագրել են Ղարաբաղը, Հայաստանը, Ադրբեջանը եւ Ռուսաստանը: Մնացած բոլորը, այսքան տարիների բանակցությունները ոչ մի արդյունք չեն տվել եւ չեն էլ կարող տալ, որովհետեւ իրական կողմը՝ Ղարաբաղն է, որ անկախացել է Ադրբեջանից, եւ ինքը պետք է գնա բանակցությունների, որպեսզի ասի՝ ինչ է տալու, ինչ չի տալու, ինչ է վերցնելու, ինչ չի վերցնելու եւ այլն: Բացի դրանից, ունենք 1991թ. հանրաքվե, որին մասնակցել են նաեւ Շահումյանի եւ Գետաշենի ենթաշրջանի բնակիչները: Հիմա դե՛ մ են այդ հանրաքվեին: Ստացվում է, որ Հայաստանը գնում է բանակցությունների, ուրեմն դե՛մ է դրան, իսկ դա արդեն հակասություն է՝ Ղարաբաղի եւ Հայաստանի միջեւ: Կամ, ասենք, մեր Մահմանադրությունը, որտեղ գրված է, որ այդ տարածքները Ղարաբաղին են: Դրա համար էլ, իմ կարծիքով, ամենալավ տարբերակն այս ժամանակաշրջանում այն է, որ հենց Ղարաբաղը գնա բանակցությունների: Հայաստանն էլ պետք է լինի բանակցությունների մասնակից, բայց հիմնական բանակցությունները պետք է վարի Ղարաբաղը:

-Իսկ, Ձեր կարծիքով, ինչո՞ւ Ղարաբաղը չի մասնակցում բանակցություններին:

- Դեռ այն ժամանակ չպիտի գնային բանակցությունների, այն ժամանակ պիտի ասեին, որ պատերազմող կողմը Ղարաբաղն է, քանի որ սկզբից էլ կողմերը Ղարաբաղը եւ Ադրբեջանն էին: Ճիշտ է, Հայաստանը կամավորներով մեզ պաշտպանել է, բայց դա չի նշանակում, որ Հայաստանն է գնացել պատերազմի: Իմ կարծիքով, Հայաստանի ղեկավարներն իրենց վրա շատ մեծ պատասխանատվություն են վերցրել, չի կարելի այդպես: Ճիշտ է, Ղարաբաղի հարցը ողջ հայ ժողովուրդը պետք է լուծի, բայց հիմնականում՝ Ղարաբաղի ժողովուրդը եւ իշխանությունները: Կարծում եմ, այդ բանակցությունները ոչ մի արդյունք չեն տա:

-Վերջերս հրապարակվել են այսպես կոչված «մադրիդյան սկզբունքները», ի՞նչ կարծիքի եք դրանց մասին:

-Մադրիդյան սկզբունքները նույնպես մշակել են առանց Ղարաբաղի: Այն սկզբունքները, որ Բրայզան եւ մյուսներն են ասում, դրանք անընդունելի են մեզ համար: Ադրբեջանը մեզանից վերցրել է Շահումյանի շրջանը, Գետաշենի ենթաշրջանը, Մարտակերտի եւ Մարտունու շրջանների մի մասը, եւ այս ամենից ելնելով եմ ասում, որ բանակցություններին պետք է Ղարաբաղը գնա, որպեսզի իմանա, թե ինչ է տալու եւ ինչ է վերցնելու: Առաջին պայմանն այս է՝ եթե ուզում են բանակցություններին Ղարաբաղը մասնակցի, ապա պետք է ճանաչեն Ղարաբաղը, Ղարաբաղի անկախությունը պետք է ճանաչեն:

-Սկստի ունեք ներկայի՞ս տարածքներով Ղարաբաղը:

-Եթե հին տարածքով էլ ճանաչեն՝ նշանակություն չունի, պիտի ճանաչեն:

-Հինը ո՞րն է՝ ԼՂԻՄ-ը:

-ԼՂԻՄ-ի տարածքն էլ եթե ճանաչեն՝ միեւնույն է: Ճանաչում ե՞ս՝ գալիս եմ արդեն բանակցությունների, չե՛ չե: Նրանք ասելու են՝ այս եւ վերցրել, մենք էլ ասելու ենք՝ դուք եք այս վերցրել, մենք դրանից հետո արդեն հանրաքվե ենք անցկացրել՝ 1991թ., Շահումյանը մասնակցել է դրան: Ուրեմն պետք է այդ հարցն էլ առաջ

քաշենք բանակցություններում, Գետաշենի հարցն էլ:

-Մադրիդյան սկզբունքներից մեկն էլ տարածքների հանձնումն է, ի՞նչ կասեք այս մասին:

-Ես մի սկզբունք ասեմ, որ 1995 թվականից եմ ասում՝ ԼՂՀ-ն պիտի սահման ունենա Հայաստանի, Իրանի եւ Ադրբեջանի հետ: Դա ի՞նչ է նշանակում: Հյուսիսային մասով պիտի Հայաստանի հետ սահման ունենա, հարավային մասով՝ Ադրբեջանի եւ Պարսկաստանի: Տարածքներ կարելի է զիջել: Զիջել՝ չի նշանակում, որ մենք Պարսկաստանի հետ սահման չունենանք, կամ թե չէ՝ Հայաստանի հետ: Քելբաջարն ու Լաչինը ոչ մի դեպքում չի կարելի տալ: Դրանք հատուցումներ են Շահումյանի եւ Գետաշենի դիմաց: Օրինակ, Ստեփանակերտ-Ադդամ-Մարտունի եւ Մարտակերտ-Ադդամ-Ստեփանակերտ ճանապարհից 5 կմ այն կողմ կարելի է զիջումներ կատարել:

Խոսում են նաեւ Հայաստանի հետ միջանցքի մասին: Ի՞նչ միջանցք, եթե Ղարաբաղը սահման ունի Հայաստանի հետ: Ուզում են նորի՞ց միջանցք բացեն, իսկ ո՞վ է հող տալիս:

-Վերջին շրջանում շատ է խոսվում նաեւ պատերազմի վերսկսման մասին: Դուք դա հնարավոր համարո՞ւմ եք:

-Իրականությունն այն է, որ պատերազմն իրենք չեն կարող սկսել: Եթե պատերազմ սկսեն՝ իրենք են կորցնում, մենք չենք կորցնում, քանի որ մեզինց 20 կմ հեռու Բաքու-Ջեյհան, Բաքու-Մուփսա խողովակաշարերն են: Դրանք պատերազմի ժամանակ կարող ենք ոչնչացնել կամ վնասել: Ասում են՝ մոտ 7-8 մլրդ գումար են ծախսել, հիմա էլ ուզում են «Լաբուկո»-ի գազն այստեղով անցկացնեն: Հիմա որ պատերազմ լինի՝ ո՞վ է վնաս անելու: Իհարկե՝ իրենք: Կարծում եմ, պատերազմի վերսկսում թույլ չեն տա Եվրամիությունը, Ռուսաստանը եւ Ամերիկան:

Բացի այդ, եթե Ադրբեջանը զգաց, որ ինքը հաղթելու է՝ պատերազմ կհայտարարի, ոչ մի կասկած չկա: Հայ ժողովուրդը, զիտեք, ծանր ժամանակաշրջանում միշտ էլ համախմբվում է, դա հաստատ է, պատմությունը ցույց է տալիս, որ եթե պատերազմ լինի՝ բոլորը համախմբվելու են, եւ Ադրբեջանն այն ժամանակ ավելի շատ վնաս է կրելու, քան հիմա:

Զրուցեց Անահիտ ԴԱՆԻԵԼՅԱՆԸ

ԼՂՀ-ն չի կարող սահմանափակել իր ինքնիշխանությունը՝ չստանալով համապարփակ միջազգային իրավաբանական ճանաչում

Մասիս ՄԱՅԻԼՅԱՆ

Արտաքին քաղաքականության եւ անվտանգության
հանրային խորհրդի նախագահ
Ստեփանակերտ

Արտաքին քաղաքականության եւ անվտանգության հանրային խորհրդի նախագահ, ԼՂՀ նախկին փոխարտգործնախարար Մասիս ՄԱՅԻԼՅԱՆԻ մեկնաբանությունը Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի նախագահների՝ Լեոնային Ղարաբաղի եւ կարգավորման հիմնարար սկզբունքների վերաբերյալ համատեղ հայտարարության մասին

Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ Ռուսաստանի Դաշնության նախագահ Դ.Մեդվեդեւի, Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Բ. Օբամայի եւ Ֆրանսիայի նախագահ Ն.Սարկոզիի համատեղ հայտարարության տեքստը շատ քիչ է տարբերվում ի պաշտպանություն ԵԱՀԿ Մինսկի գործընթացի

տարբեր մակարդակներով եւ տարբեր միջազգային կառույցների շրջանակներում նախկինում ընդունված հայտարարություններից: Հատկանշական է, որ ներկայումս երեք երկրների նախագահները Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանություններին կոչ են անում ավարտին հասցնել ԵԱՀԿ պաշտոնական կայքում (<http://www.osce.org/item/38731.html>) հրապարակված կարգավորման կոնկրետ սկզբունքների համաձայնեցումը:

Փորձենք համառոտակի մեկնաբանել յուրաքանչյուր սկզբունք:

1. Լեռնային Ղարաբաղը շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանի վերահսկողությանը

ԼՂՂ վերահսկողության տակ գտնվող որեւէ տարածքի հանձնումը Ադրբեջանին առաջին հերթին նշանակելու է խախտում ԼՂՂ հիմնական օրենքի՝ Մահմանադրության, որում ամրագրված են տվյալ տարածքները: Երկրորդ՝ ազատագրված տարածքների անգամ մի մասից ԼՂՂ պաշտպանության բանակի ուժերի դուրսբերումը կխախտի ԼՂՂ ռազմական եւ պարենային անվտանգությունը: Հրապարակված սկզբունքներում ակնարկ անգամ չկա Ադրբեջանի կողմից գավթված ավելի քան 1000 քառ. կմ. դարաբաղյան տարածքները ԼՂՂ վերահսկողությանը վերադարձնելու մասին: Բանակցություններում խոսքը պետք է գնա ոչ թե տարածքների, այլ ԼՂՂ եւ Ադրբեջանի միջեւ սահմանի մասին: Ադրբեջանի կողմից ԼՂՂ պետականության ճանաչումից հետո միայն երկու կողմերի միջկառավարական հանձնաժողովը պետք է զբաղվի միջպետական սահմանազատմամբ: Այդ է վկայում սահմանային վեճերի լուծման միջազգային պրակտիկան:

2. Լեռնային Ղարաբաղին միջանկյալ կարգավիճակի տրամադրում՝ անվտանգության եւ ինքնակառավարման երաշխիքների ապահովմամբ

Այս սկզբունքն իրականում ԼՂՂ ինքնիշխանությունը սահմանափակելու՝ կասկածի տակ դնելով նրա անկախ կարգավիճակը, եւ պետությանը սեփական անվտանգության համակարգից զրկելու փորձ է նշանակում:

Անվտանգության իրական ապահովում կարող է լինել ԼՂՂ անկախության ճանաչումը, ինչը Արցախին նոր հնարավորություններ կընձեռեր սեփական անվտանգությունը պաշտպանելու համար, այդ թվում՝ քաղաքական-դիվանագիտական միջոցներով:

3. Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող միջանցք

ԼՂՂ եւ Հայաստանի միջեւ ցամաքային կապը հաստատվել է 1992-ի մայիսին եւ ընդարձակվել է 1993թ. մարտական գործողությունների ընթացքում: Ուղղակի միամտություն կլինեք ԼՂՂ եւ Հայաստանի միջեւ ներկայիս լիարժեք ցամաքային կապը սահմանափակել խոցելի «միջանցքով»: Հետաքրքիրն այն է, որ նշված սկզբունքն առաջարկվում է որպես հայերին արվող զիջում:

4. Լեռնային Ղարաբաղի վերջնական իրավական կարգավիճակի հետագա որոշում՝ իրավականորեն պարտավորեցնող կամարտահայտության միջոցով

ԼՂՂ իրավական կարգավիճակն արդեն որոշված է իրավականորեն պարտավորեցնող կամարտահայտության հիման վրա՝ 1991թ. դեկտեմբերի 10-ին, եւ հաստատված մեկ այլ՝ ԼՂՂ Մահմանադրության ընդունման հանրաքվեով՝ 2006թ. դեկտեմբերի 10-ին: Բացի այդ, ԼՂՂ ժողովուրդը 8 անգամ անուղղակիորեն արտահայտել է անկախ պետականության իր հավատարմությունը համապետական՝ նախագահական եւ խորհրդարանական ընտրություններում՝ քվեարկելով քաղաքական կուսակցությունների եւ առանձին թեկնածուների ծրագրերի օգտին, որոնցում նշվել է ԼՂՂ միջազգային ճանաչման եւ պետականության ամրապնդման անհրաժեշտությունը: Այսպիսով, վերջին 18 տարիներին ԼՂՂ քաղաքացիները 10 անգամ արտահայտվել են ԼՂՂ անկախ կարգավիճակի օգտին:

5. Բոլոր ներքին տեղահանված անձանց եւ փախստականների՝ իրենց նախկին մշտական բնակության

վայրերը վերադառնալու իրավունքի ապահովում

Մույն սկզբունքը բոլոր երեք կողմերի միջև կարող է քննարկվել Ադրբեջանի կողմից ԼՂՀ անկախության ճանաչումից հետո: Դրական հանգամանք կարելի է համարել «բոլոր» բառի օգտագործումը, այլ ոչ միայն ադրբեջանցի փախստականներին նկատի ունենալը: Չնայած անհասկանալի է, թե ով էլ ինչ ձեռով կարող է ապահովել իրավունքներն ու երաշխավորել անվտանգությունը հարյուր հազարավոր այն մարդկանց, որոնք կարող են հայտնվել հակառակ կողմի տարածքում:

6. Անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն խաղաղապահ գործողություն

Ըստ էության, մեզ առաջարկվում է ռազմական անվտանգության սեփական համակարգը փոխարինել «կապույտ սաղավարտների» անարդյունավետ մեխանիզմով: ԼՂՀ տարածքում օտար զինված ուժերի հնարավոր տեղաբաշխումը՝ թող որ անգամ միջազգային հեղինակավոր կազմակերպությունների դրոշի ներքո, անմիջապես կտրուկ կսահմանափակի հանրապետության ինքնիշխանությունը: Այն հանգամանքը, որ ԼՂՀ ինքնիշխանությունը դեռևս չի ճանաչվել միջազգային հանրության կողմից էլ, ըստ այդմ էլ, երկիրը ներկայացված չէ վերոնշյալ կառույցներում, կարող է հանգեցնել նրան, որ Ղարաբաղը չի ունենա այդ ուժերի վրա ազդելու միջազգային իրավունքով երաշխավորված որեւիցե լծակով: Այս պայմաններում խաղաղապահ ուժերի հնարավոր տեղաբաշխումը արմատապես կհակասի մեր ազգային շահերին: ԼՂՀ-ն չի կարող սահմանափակել իր ինքնիշխանությունը՝ չստանալով համապարփակ միջազգային իրավաբանական ճանաչում:

Անվտանգության պահպանման անմիջական պարտականությունների, իսկ դրանց հետ միասին նաև կոնկրետ տարածքների փոխանցումը երրորդ կողմին չի երաշխավորում այդ նույն անվտանգության ամրապնդում էլ իր մեջ նոր սպառնալիքներ է պարունակում:

Ղարաբաղցիներն ունեն խորհրդային ժամանակաշրջանի «խաղաղապահների» հետ շփման սեփական փորձ, երբ 1980-ականների վերջին բնակչության անվտանգության ապահովման նպատակով ուղարկված զորքերը պարբերաբար թերանում էին իրենց պարտականությունների կատարման մեջ էլ չկարողացան Ադրբ. ԽՍՀ հայազգի բնակչությանը պաշտպանել ջարդերից ու բռնություններից: 1991 թվականին, ԽՍՀՄ ղեկավարության հրամանով, նույն այդ զորքերը հայազգի բնակչությանը բռնի տեղահանեցին Արցախի որոշ մասերից («Կոլցո» օպերացիա): Խաղաղապահ գործողությունների նվազ արդյունավետությունը դրսևորվել է նաև այլ հակամարտ գոտիներում:

Խաղաղապահներին հակամարտության գոտի ուղարկող կառավարությունների համար հենց իրենց՝ խաղաղապահների շահերն ու անմիջական անվտանգությունը միշտ էլ ավելի կարևոր են լինելու, քան տեղաբնիկների անվտանգությունը:

Հրապարակված հիմնարար սկզբունքների ընդունումն ու իրականացումն անուղղելի վնաս կհասցնեն ԼՂՀ-ի ու ՀՀ-ի ազգային շահերին: Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման հիմնարար սկզբունքների անընդունելիությունն արձանագրվել է նաև հուլիսի 10-11-ին ԼՂՀ մայրաքաղաքում անցկացված Համահայկական համաժողովի բանաձեռում: Հայաստանից, Արցախից էլ Սփյուռքից համաժողովին մասնակցածները Հայաստանի Հանրապետության իշխանություններից պահանջել են չստորագրել առաջարկվող փաստաթուղթը: Ակնհայտորեն կա այն բանի ըմբռնումը, որ հակառակորդին այն տարածքների հանձնումը, որոնց նկատմամբ հայ ժողովուրդն ունի ինչպես իրավաբանական ու քաղաքական, այնպես էլ պատմական իրավունք, բարոյական ուժեղ հարված է լինելու հայ ժողովրդին, ինչը կարող է նրան տեւական ժամանակով զրկել դիմադրելու ազգային կամքից էլ սեփական պետականություն կառուցելու իմաստավորումից:

12 հուլիս, 2009թ.

Ստեփանակերտ

«Ճամփեն պիտի չիմանա, թե ուր կերթամ ես»

Գեղամ ԲԱՂԱՍՏԱՐՅԱՆ

Լրագրող

Ստեփանակերտ

Որպես նախաբան

Հայտնի երգի այս տողը շատ է սագում մեր այսօրվա վիճակին, քանի որ ինքներս էլ չենք գիտակցում, թե ինչ հանգրվանում ենք հայտնվել: Թեև գիտակցելու համար առանձնակի ջանք չի պահանջվում, եթե, իհարկե, կա ցանկություն: Իրականությունն, ըստ իս, այն է, որ հայկական երկրորդ պետականությունն այսօր կանգնած է բավականին լուրջ ու վտանգավոր մարտահրավերների առաջ: Ղարաբաղյան հիմնախնդրի քաղաքական կարգավորման բանակցային գործընթացն այսօր մի այնպիսի փակուղային-ծուղակային հանգրվանում է, որից մեր նորանկախ պետության համար ընդունելի ու բարենպաստ լուծում ակնկալելն ուղղակի անհնար է: Ինչու՞ այդպես եղավ:

Ինչու՞ է ինչպե՞ս դուրս մղվեցինք բանակցային գործընթացից

Բանակցային գործընթացից Լեռնային Ղարաբաղի դուրս մնալն արդեն իսկ ծանր հետեւանքներ է ունեցել եւ կարող է շատ ավելի ծանր հետեւանքների հանգեցնել: Բացի նրանից, որ մենք օտարվել ենք մեր իսկ ճակատագրի քննարկումից, Ղարաբաղը բանակցությունների սուբյեկտից վերածվել է օբյեկտի, ինչը, փորձագետ Մանվել Սարգսյանի դիպուկ բնորոշմամբ, նշանակում է, որ մենք դիտարկվում ենք ընդամենը որպես տարածք: Իմա՝ ժողովրդի ինքնուրույն դերի կորուստը նրա պայքարը հանգեցնում է իր տարածքի շուրջ վեճի, սպառնալիք է ստեղծվում բնակիչների անվտանգությանը, քանի որ, ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, այդ տարածքների քաղաքական սուբյեկտի դերը կորցրած ժողովուրդներն առավել հաճախ ընդամենը զոհերն են դառնում նույն այդ տարածքների համար մղվող պատերազմի:

Բանակցային ներկայիս՝ Հայաստան-Ադրբեջան ձեւաչափը խեղաթյուրել է նաեւ հակամարտության էությունն ու կարգավիճակը՝ Ադրբեջանին թույլ տալով հիմնախնդիրը տեղափոխել իրեն ձեռնտու հարթություն, որպես Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ տարածքային վեճ: Մեր դուրսմղման պատճառները շատ են՝ Ադրբեջանի կոշտ դիրքորոշումը, միջնորդների հարմարվողական կեցվածք, Հայաստանի իշխանությունների եսամոլ քաղաքականությունն էլ այլն, եւ այլն: Սակայն այս ամենում ամենամեծը հենց Ղարաբաղյան կողմի մեղքն է, քանի որ այդ ամենը հնարավոր եղավ Ղարաբաղյան իշխանությունների կրավորական-սպասողական ու եսակենտրոն, այլ ոչ թե Ղարաբաղակենտրոն կեցվածքի պատճառով:

Այսօր արդեն գաղտնիք չէ, որ Ղարաբաղը դուրս մղվեց այն պահից ի վեր, երբ Քոչարյանը դարձավ ՀՀ նախագահ եւ որպես Ղարաբաղի սկսեց ներկայացնել նաեւ Ղարաբաղը (այս մասին հավաստում են անգամ միջնորդները): Միգուցե սա զուտ մարդկային հարաբերությունների առումով փոքրիշատե ընկալելի էր, բայց պետական հարաբերությունների մակարդակում այն պարզապես արտուրդ էր:

Սակայն այստեղ կա մի նրբերանգ: Ինչ խոսք, շատ վատ է, որ Հայաստանը մենաշնորհել է հայկական երկու կողմերի իրավունքները, բայց նաեւ չպիտի մոռանալ, որ Հայաստանը մենաշնորհել է ոչ միայն իրավունքները, այլեւ պատասխանատվությունը: Իսկ ԼՂՀ իշխանությունների «շահումը» հենց պատասխանատվության բեռը թողափելն էր: Տարիներ շարունակ ԼՂՀ իշխանությունները սպասողական կեցվածք էին որդեգրել, չդրսեւորելով որեւիցե նախաձեռնություն, ունենալով սոսկ արձագանքային-անդրադարձային մարտավարություն: Ղարաբաղյան արտաքին քաղաքականության պատասխանատուները գրեթե ոչինչ չեն արել նորանկախ երկրի միջազգային ճանաչման ուղղությամբ: Մեծ սխալ էր ԼՂՀ ճանաչումը կախման մեջ դնելը բանակցային գործընթացից, շատ ավելի արդյունավետ

կլիներ այս երկու ուղղությունների համատեղումը՝ շեշտը դնելով հենց ճանաչման վրա:

Այս ամբողջ ընթացքում Արցախի իշխանությունների արձագանքը կոտրած պոստֆոնի պես նույնն էր՝ «առանց ԼՂՀ մասնակցության բանակցային գործընթացը չի կարող արդյունավետ լինել»: Ասում էին ու ինքնահանգստանում, ասում էին ու անցնում «իրենց» գործին: Եւ գործընթացը դրանից չէր տուժում: Այս մասին գիտեին թե՛ ասողները, եւ թե՛ լսողները: Իսկ չի տուժել, քանի որ մեր խոսքին չի հետեւել գործը:

Ի՞նչ է փոխվել այսօր

Վերջին շրջանում նաեւ պաշտոնական Երեւանն է խոսում այն մասին, որ ԼՂՀ-ն պետք է վերադառնա բանակցային սեղանի շուրջ: Ու ոմանց թվում է, թե ՀՀ ներկայիս իշխանությունները դրանով իսկ փաստացիորեն սխալ են համարում նախորդների վարած քաղաքականությունը: Մինչդեռ իրականում ոչինչ էլ չի փոխվել: Հայաստանի եւ՝ նախորդ, եւ՝ ներկայիս իշխանությունները նույն քաղաքականությունն են վարում այս հարցում: «Դատապարտվածի» շարունակական քաղաքականություն էլ վարել են ու վարում են Արցախի հիմունքի իշխանությունները:

Պարադոքսը կայանում է նրանում, որ ոչ ոք կարծես թե դեմ չէ դարաբաղյան կողմի մասնակցությանը, բայց մենք, այդուամենայնիվ, չենք մասնակցում: Այս պարադոքսը կոչված է քողարկելու իրերի իրական դրությունը: Իրականում ոչ մի հակասություն էլ չկա: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները քանիցս հավաստել են, որ մեր մասնակցությունը կլինի Հայաստանի ու Ադրբեյջանի միջուկ կարգավորման հիմնարար սկզբունքների համաձայնեցումից հետո: Ղարաբաղյան կողմի մասնակցության անհրաժեշտության մասին պարբերաբար պնդող ԼՂՀ իշխանությունները պարզապես պիտի ազնվորեն հստակեցնեն իրենց դիրքորոշումն այս հարցում՝ նրանց համար ընդունելի՞ է միայն այդ փուլից բանակցային գործընթացին մասնակցելը, թե՞ նրանք, դարաբաղյան կողմի մասնակցության մասին խոսելիս, նկատի ունենին բանակցային գործընթացն ամբողջությամբ: Այլ կերպ՝ մերոնք համաձայնվելու՞ են մտնել համաձայնեցված շրջանակ-ճաղավանդակի մեջ, թե՞ ոչ: Այսօր այս հարցը պիտի պարզել:

Այլ էլք չկա՝ ԼՂՀ իշխանությունները պիտի հստակեցնեն իրենց դիրքորոշումը, այն է՝ կիսու՞մ են ՀՀ իշխանությունների դիրքորոշումը, թե՞ ոչ: Դատելով մամուլի հրապարակումներից՝ ՀՀ եւ ԼՂՀ դիրքորոշումներում սկզբունքային տարբերություններ կան: Մյուս կողմից էլ՝ նորերս ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը Ստեփանակերտում տված իր հարցազրույցում շեշտեց, որ ՀՀ ղեկավարությունը ոչինչ չի անում առանց ԼՂՀ ժողովրդի ու ղեկավարության իմացության ու համաձայնության: Իսկ Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանն էլ ԼՂՀ նախագահի հետ հանդիպելուց հետո հավաստել է, որ ԼՂՀ ղեկավարությունը լիովին վստահում է ՀՀ ղեկավարությանը: Ուրեմն՝ ո՞րն է ճշմարտությունը:

Կարծիք կա նաեւ, որ Ղարաբաղը կրկին բանակցությունների կողմ դարձնելու մասին Հայաստանի հայտարարությունը փորձ է խուսափել պարտադրվող լուծումներից: Վատ չէր լինի, իհարկե, եթե այդպես լիներ, բայց, կարծում եմ, մենք ցանկալին իրականության տեղ ենք ընդունում: ՀՀ եւ ԼՂՀ իշխանությունների պահվածքը նահանջի ճանապարհ չի թողել: ՀՀ իշխանությունները վերջին տասնամյակում հաջողությամբ ի չիք են դարձրել ղարաբաղյան գործոնն ընդհանրապես, այնպես որ նման հաշվարկը միայն թերահավատ ժպիտներ կառաջացնի: ԼՂՀ իշխանություններն էլ համազգային միասնության քողի տակ ստեղծել են միաբեւեռ ու միատանիք հասարակություն, այնպես որ ներքին ճնշման տարբերակը եւս նույնպիսի ժպիտների տեղիք կտա: Այսուհանդերձ, հակված եմ կարծելու, որ դեռեւս ուշ չէ իրավիճակը փոխելու համար: Թեւեւ փոխելու առանձնակի ցանկություն էլ չեմ տեսնում:

Չկա չարիք առանց բարիքի՞

Վիճակը որքան էլ վատ ու չարիքային է, այնուամենայնիվ՝ մի ճարահատ բարիք ունի: Բանակցային գործընթացին ԼՂՀ-ի չմասնակցելը նույնիսկ երկու էական առավելություն ունի: Մեկն այն է,

որ այն հնարավորություն է տալիս պատասխանատվություն չստանձնել ներկայիս մեզ համար անբարենպաստ պայմանավորվածությունների համար: Ինչ խոսք, ամենաճիշտն այն կլիներ, որ չհանդուրժեինք մեզ մեկուսացնելը, պատասխանատվությունը մեզ վրա վերցնեինք հենց սկզբից: Բայց այսօր այլ էլք չկա, քան առանց մեզ ձեռքբերված պայմանավորվածությունների համար պատասխանատվությունից հրաժարումը: Երկրորդ հանգամանքն այն է, որ այսօր, ցավոք սրտի, ինչ-որ տեղ մեր մասնակցության մասին մեր իսկ հայտարարությունները ինքնանպատակ են թվում այն պատճառով, որ մենք դեռ պատրաստ չենք ըստ արժանվույն մասնակցելու այդ գործընթացին: Խոսքը եւ՛ մեր ներկայիս ինտելեկտուալ պոտենցիալի մասին է, եւ՛ բանակցային գործընթացին չմասնակցելով պայմանավորված համապատասխան նախապատրաստվածության եւ մշակումների, այսպես կոչված «դոմաշնյայա զագոտովկա»-ի մասին: Այս պահին մեզ համար կարեւոր պիտի լինեն ոչ այնքան մեր մասնակցության մասին հայտարարությունները, որքան այն հարցը, թե մասնակցելու դեպքում ինչ ենք ասելու եւ ինչ ենք անելու: Այսինքն ըստ ամենայնի պատրաստվելու հնարավորություն ունենք:

Եթե այս վերջին հնարավորությունն էլ մեր իշխանությունները մսխեն, ապա միակ հույսը մնալու է հանրային ռեզերվը, արցախյան հանրության վերջին խոսքը: Սա վերջին լակոնուսաթուղթն է պարզելու համար՝ մենք դեռ ժողովուրդ ենք, թե՛ արդեն բնակչություն:

Մադրիդյան սկզբունքներ. շա՞նս, թե՞ ծուղակ

Ասում են, թե մադրիդյան սկզբունքները համալրվել են, եւ արդեն խոսում են կրակոյվյան սկզբունքների մասին: Որքանո՞վ մարտելի կլինի մեզ համար «կրակոյվյան երշիկը»: Մույն նորությամբ զուգահեռ հնչեց նաեւ ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանի կարծիքը՝ համեմատելով ԼՂՀ հարցի լուծմանը վերաբերվող բոլոր տարբերակները, նա պնդել է, որ մադրիդյան սկզբունքները նախընտրելի են Հայաստանի համար:

Կրակոյվյան փոփոխությունները չեն կարող սկզբունքային լինել, «կրակոյվյան երշիկն» էլ հարիբ կլինի միայն ադրբեջանական խոհանոցին, քանի որ ելակետն էն գլխից սխալ էր, եւ նման ելակետի պայմաններում որակապես նոր ու դրական որեւէ բան դժվար է ակնկալել: Հենց այս տեսանկյունից էլ կուզենայի մեկնաբանել պարոն Օսկանյանի ասածը: Մասամբ համաձայն եմ նրա հետ, քանի որ ժողովրդի կամավոր կամարտահայտության, այլկերպ՝ ինքնորոշման իրավունքն այս կամ այն ձևով, այս կամ այն չափով հստակեցված ու ամրագրված չէր նախորդ առաջարկություններում: Բայց այս «նախընտրելի» տարբերակը եւս ընդունելի չի կարող լինել նույն այդ պատճառով՝ էն գլխից սխալ ելակետի պատճառով: Կարգավորման բոլոր տարբերակներում էլ հիմնականը տարածքների վերադարձն է, մինչդեռ տարածքներն ընդամենը հետեւանք են, մեզ պարտադրված պատերազմի հետեւանք: Հիմնախնդիրը կար, երբ տարածքները Ադրբեջանի վերահսկողության տակ էին: Հիմնախնդիրը կար, երբ փախստականներ դեռ չկային: Այսինքն՝ ելակետը պիտի լիներ հիմնախնդրի, այն է՝ կարգավիճակի լուծումը, որից հետո կարելի կլիներ քննարկել մյուս բոլոր հարցերը: Այսինքն՝ պատճառն ու հետեւանքները սխալ հերթականությամբ են դրվել բանակցային սեղանին: Միայն ԼՂՀ ճանաչումից հետո կարող է խոսք լինել մյուս բոլոր հարցերի մասին, այդ թվում՝ տարածքների մասին, կամ, ավելի ճիշտ, ինչպես Մասիս Մայիլյանն է ասում՝ ԼՂՀ-ի ու Ադրբեջանի միջեւ պետական սահմանագատման գործընթացի մասին:

Ոմանք ջանադրաբար քննարկում են «մադրիդյան սկզբունքներ՝ շա՞նս, թե՞ ծուղակ» թեման: Ըստ իս, ոչ շանս է, ոչ էլ ծուղակ: Ընդհանրապես, գտնում եմ, որ մեր իշխանությունները ճիշտ կանեին, որ չմոլորվեին շանսի ու ծուղակի գնահատման որոնումներում, այլ խթանեին ազատ ու ժողովրդավարական երկրի կառուցումը, որտեղ երկրի ճակատագրի համար պատասխանատու է յուրաքանչյուր քաղաքացի: Մենք ենք մեզ թե շանս տվողը, թե ծուղակի մեջ գցողը: Քաղաքակիրթ երկիր ունենալն անվտանգության ամենամեծ երաշխիքը կլիներ, ամենամեծ շանսն ու ծուղակից խուսափելու ամենալավ կողմնացույցը:

Պատերազմ, թե՞ խաղաղություն

Մույն վերտառությամբ ժամանակին ցնցող հոդված էր գրել ՀՀ առաջին նախագահը: Այսօր էլ այս

երկրնտրանքը հրատապ է մնում, ընդ որում՝ այն համահունչ է դարձել շեքսպիրյան «լինե՛լ, թե՛ չլինել» հարցին: Ումանք փորձում են համոզել, թե կարգավորման առաջարկվող փաթեթից, ըստ այդմ էլ տարածքների վերադարձից հրաժարումն ուղիղ ճանապարհ է դեպի պատերազմ: Իրականում միանգամայն հակառակն է՝ տարածքների հանձնումը, իմա՝ ռազմական հավասարակշռության խախտումն է տանում դեպի այդ հանգրվան: Ադրբեջանական քարոզչամեթոդներն, իրեն հատուկ սանձարձակությամբ, չի էլ ժխտում դա: Լրատվամիջոցները հեղեղված են ադրբեջանական այն փաստարկով, որ տարածքներին վերատիրանալուց հետո Ադրբեջանի կողմից սկսվելիք պատերազմը նույն լեզիտիմությունն է ունենալու, ինչպես որ հիմա ունի: Ադրբեջանցիները չեն էլ թաքցնում հրճվանքը, նշելով, որ տարածքներն առանց մի կաթիլ արյան ստանալուց հետո իրենք մեծ առավելություն են ունենալու, ինչը արցախահայերին միայն մի տարբերակ է թողնելու՝ թողնել հայրենիքը: Չթողնեն էլ՝ պրոբլեմ չէ, քանի որ այն ժամանակ արդեն Ղարաբաղ վերադարձած 60 հազար ադրբեջանցիները հարցը կամաց-կամաց լուծելու են, այն էլ հաճելի գույակցելով օգտակարի հետ, իմա՝ բազմանալով:

Ահա թե ինչու հայաստանցի մեր գործընկերներից մեկը «պատերազմ, թե՛ խաղաղություն» երկրնտրանքն այլ կերպ է հնչեցնում՝ պատերազմ, թե՛ կոտորած: Ընտրենք:

Տարածքներ

Տարածքների հարցը նախ եւ առաջ անվտանգության ոլորտի խնդիր է: Ըստ էության, առաջարկվում է անվտանգության մեր սեփական համակարգը փոխարինել մեկ այլ՝ «ոչ տեղական արտադրության» համակարգով, որում մեր ներկայությունը սիմվոլիկ է: Սա շատ վտանգավոր է: Եւ խաղաղապահների ներկայությունն անգամ մեզ համար բավարար պայման չէ անվտանգության մեր համակարգից հրաժարվելու համար: Ինչպես ԼՂՀ նախկին փոխարտգործնախարար Մասիս Մայիլյանն է հստակ պարզաբանել՝ այն հանգամանքը, որ ԼՂՀ ինքնիշխանությունը դեռեւս չի ճանաչվել միջազգային հանրության կողմից եւ, ըստ այդմ էլ, երկիրը ներկայացված չէ միջազգային կառույցներում, կարող է հանգեցնել նրան, որ Ղարաբաղը չի ունենա այդ ուժերի վրա ազդելու միջազգային իրավունքով երաշխավորված որեւիցե լծակ:

Ընդհանրապես, անհասկանալի է, երբ ասում են՝ տուր հրացանդ, եւ ես կապահովեմ քո անվտանգությունը: Հրացանով, կարծես թե, մենք ավելի անվտանգ ենք: Հրացանն անպայման պատերազմ չի նշանակում, եւ դա այն դեպքը չէ, երբ պիեսի սկզբում ուշադրություն գրաված հրացանն անպայման պիտի կրակի պիեսի վերջում: Մեր անվտանգության մասին իբր թե հոգացողներին սկզբունքորեն չպիտի խանգարի անվտանգության մեր սեփական համակարգը:

Ինչ վերաբերում է տարածքային զիջմանն ընդհանրապես դեմ լինել-չլինելուն, ապա եթե վերացարկվենք ամեն ինչից՝ կարելի է զանազան տարբերակներ քննարկել: Բայց մենք ապրում ենք իրական, այլ ոչ թե վերացական-վիրտուալ աշխարհում: Պաշտոնական Բաքվի ներկայիս ռազմական հոետորոթյան, Ադրբեջանում ներկայիս հակահայ հիստերիայի պայմաններում անիմաստ է նման հարցեր ոչ միայն լրջորեն քննարկել, այլեւ մտածել անգամ:

Չայն բազմաց՝ ձայն Աստծո

Իսկ ի՞նչ են ասում բազումք:

Արցախյան հանրության դիրքորոշման հստակեցմանը խանգարող երկու հանգամանք կա: Առաջինը քաղաքական կյանքից կտրվածությունն է, որ արդեն երկար տարիների ավանդույթ ունի: Մրա պատճառները տարբեր են եւ այլ խոսակցության թեմա, բայց դրանք միագումար հանգեցրել են նրան, որ երբեմն դառնությամբ կատակում ենք, որ ղարաբաղյան հիմնախնդիրը Ղարաբաղում հրատապ չէ: Վիճակը կարծես թե փոխվում է հիմա, կա որոշակի խլրտում, մտահոգություն: Բայց հիմա էլ, որքան էլ պարադոքսալ ինչի, այն հանգամանքն է խոչընդոտում, որ ԼՂՀ իշխանությունների վերջին երկու տարիների հայտարարությունները կարծես թե համահունչ չեն Չայաստանի ղեկավարության հրապարակային դիրքորոշմանը եւ շատ ավելի հուսադրող են: Այս հանգամանքն ինքնահանգստացնում է

հանրությանը, թեև երբ հանրությունը փորձում է այդ հայտարարություններից բխող կեցվածք ընդունել, ապա անհասկանալի դիմադրության է հանդիպում: Մասնավորապես, այդպես էր, երբ մի խումբ պատգամավորներ փորձեցին Ազգային ժողովի արտահերթ նիստ նախաձեռնել եւ հանդես գալ հստակ ու կոշտ դիրքորոշմամբ: Այս իրավիճակում կամ ԼՂՀ իշխանությունները պիտի առավելագույնս հստակեցնեն իրենց դիրքորոշումը, կամ էլ հանրությունը պիտի վճռականորեն հետամուտ լինի դրան: Այլ ելք չկա: Ցավալի է, բայց փաստ՝ երկու հայկական պետությունների իշխանությունների ներկայիս որակը չի համապատասխանում մեր առջև ծառայած մարտահրավերների որակին: Ըստ այդմ էլ՝ երիցս կարելուովում է երկու հանրությունների դերը մեր ժողովրդի համար այս ճակատագրական պահին:

Պահեստային տարբերակ. կա՞, թե՞ չկա

Երեւանաբնակ մեր հայրենակիցներից մեկը սիրում է կրկնել, որ ինքը հավատում է արցախցիների ինքնապահպանման բնագոյին, հավատում է անգամ ամենածանր պահերին, անգամ այն ժամանակ, երբ անտրամաբանական ու վտանգավոր է լինում մեր պահվածքը: Ասում է՝ դարերի փորձն ու գեներն արցախցիների գաղտնի խորհրդատուն են, որոնք հուշում են երբեմն անմեկնաբանելի պահվածք, որին հասու չեն անգամ այդ պահվածքի կրողներն իրենք:

Հրաշալի է, իհարկե, եթե այդպես է: Թեև միայն գեների վրա հույս դնելն ու սեփական պահվածքին հասու չլինելը դժվար թե լավ բանի հասցնի: Իսկ հաստատ կհասցնի, եթե այդ աստվածատուր շնորհին գումարվեն խելքն ու կամքը:

Վերջին տարիների մեր անտարբեր պահվածքը գոնե «գենային տրամաբանությամբ» ինչ-որ կերպ կարող է մեկնաբանվել, եթե մենք գիտենք, թե ինչ ենք անում եւ ուր ենք գնում: Քաղաքական, բանակցային հորձանուտներից ու զարգացումներից մեր հեռու մնալը, ինքնամեկուսանալն ու գլուխկախ մեր գործն անելը միայն մի արդարացում կարող են ունենալ: Եթե այդ ամբողջ ընթացքում մենք պատրաստվել ենք՝ լավ ու վատ օրվան: Եթե մեր ամբարները լիքն են մի քանի տարվա պաշարով, եթե զինապահեստները լիքն են մի քանի տարվա զինամթերքով ու թշնամու համար տհաճ անակնկալներով, եթե ժողովրդագրական գաղտնի հեղափոխություն ենք արել՝ մեր ազատագրած տարածքներում բնակեցնելով տասնյակ հազարավոր մարդկանց, եթե ապահովվել ենք սոցիալական արդարություն, որպեսզի մարդ կարողանա արժանապատիվ կյանքով ապրել ու չլքի հայրենիքը, եթե պետական պաշտոնյաները խնայողաբար են օգտագործում պետական միջոցները, այլ ոչ թե դրանք ծախսում շքեղ մեքենաների ու փափուկ կահույքի համար: Եւ այլն, եւ այլն:

Յուրաքանչյուր մարդ թող ինքը պարզի՝ մեզ մոտ իրո՞ք այդպես է, թե՞ ոչ: Եթե այո՝ հանգիստ թող քնի: Եթե ոչ՝ թող մտախոզվի: Գոնե հանուն իր սիրաասուն բալիկների կյանքի:

Որպես վերջաբան

Վերջացնեմ նրանով, ինչով սկսել եմ, այն է՝ հայտնի երգի տողով: Այո, ճամփան կարող է չիմանալ, թե ուր կերթա ճամփորդը: Բայց ճամփորդը պիտի իմանա:

Ղարաբաղը պիտի կամ հրաժարվի Հայաստանի ծառայություններից, կամ էլ ընդունի դրանք

Նաիրա ՀԱՅՐՈՒՄՅԱՆ

Լրագրող

Ստեփանակերտ

Ինչպես ծանոթներիցս մեկը նկատեց՝ միջնորդներն արդեն հրապարակել են մադրիդյան սկզբունքները եւ

բացահայտ խոսում են տարածքների հանձնման, փախստականների վերադարձի եւ այլնի մասին, իսկ Ղարաբաղի դիրքորոշումն առաջվա պես մնում է «գաղտնապահական»: Ծանոթս, թերեւս, փոքր ինչ իրավացի չէ Ղարաբաղի դիրքորոշումն ավելի քան ակնհայտ է, պարզապես ոչինչ չի արվում, որպեսզի այն ազդի բանակցային գործընթացի եւ տարածաշրջանային քաղաքականության վրա: Իսկ սա նշանակում է, որ այդ դիրքորոշումը գրոշի արժեք անգամ չունի:

Պաշտոնական մակարդակով ԼՂՀ իշխանությունները քանիցս հավաստել են, որ կասկած անգամ չի կարող լինել Ղարաբաղի տարածքային ամբողջականության մասին, որ մեր բանակը հուսալիորեն պաշտպանում է մեր իսկ Սահմանադրությամբ ամրագրված սահմանները, իսկ ԼՂՀ ԱԳՆ-ն էլ հանդես է եկել մադրիդյան սկզբունքների անընդունելիության մասին կոշտ հայտարարությամբ: Մադրիդյան սկզբունքների մասին ընդգծված միանշանակությամբ հանդես են եկել նաեւ հասարակական, երիտասարդական կազմակերպությունները, իսկ շարքային քաղաքացիներն էլ «ինչպե՞ս ես վերաբերվում տարածքների հանձնմանը» հարցին ի պատասխան կարող են ծիծաղել ու արդեն իրենք քեզ հարցնել, թե այդ ում մտքով է նման հիմարություն անցել: Այլ խոսքերով, բանակցային սեղանին դրված խնդրո առարկա սկզբունքները կասկածի տեղիք չեն տալիս: Կասկածի տեղիք չի տալիս նաեւ այն, որ ստեղծված վիճակից միակ էլքը կարող է լինել մադրիդյան սկզբունքների հիման վրա տարվող բանակցություններից հրաժարվելը:

Տրամաբանությունը հուշում է, որ նման դիրքորոշման պարագայում պիտի հստակ ու կտրուկ քայլեր ձեռնարկել, որոնք միջազգային հանրությանը կստիպեին հաշվի նստել ղարաբաղյան գործոնի եւ Ղարաբաղի ժողովրդի կամքի հետ: Սակայն ղարաբաղյան իշխանություններին ինչ-որ բան խանգարում է այդպէր պ սեփական դիրքորոշումն արտահայտել եւ հրաժարվել բանակցային գործընթացում Հայաստանի ծառայություններից: ՀՀ արտգործնախարարն առաջվա պես ողջունում է մադրիդյան սկզբունքները, իսկ իշխող կոալիցիան էլ ժողովրդին համոզում է փոխզիջումների անխուսափելիության մեջ:

Իսկ խանգարող հանգամանքները, ցավոք, միանգամայն «առօրեական» են՝ Ղարաբաղի եւ Հայաստանի իշխանությունների «անձնական» եւ «ընկերական» հարաբերությունները: Դե, Ղարաբաղի իշխանությունը չի համարձակվում «պապայից» առաջ անցնել, չի կարողանում ինքնուրույն քայլեր անել եւ պատրաստ է կատարելու Հայաստանի նախագահի շուրթերից հնչած ցանկացած հրահանգ, անգամ եթե նախագահի աչքերը միանգամայն այլ բան են խնդրում:

Ղարաբաղյան լռության մի պատճառ էլ կա. հայկական մասնատվածության վիրտուալ սպառնալիքը: Հայաստանում իշխող ուժերը հետեւողականորեն հայ հանրության գիտակցության մեջ են ներարկում այն միտքը, որ ղարաբաղյան հարցում անհրաժեշտ է Հայաստանի, Սփյուռքի ու Արցախի միասնությունը: Եւ որ, իբր, ղարաբաղյան հարցում տարածայնությունները թուլացնում են Հայաստանի դիրքերը: Ղարաբաղում միանգամայն լուրջ են ընդունում այդ սպառնալիքը, փորձելով խուսափել ներազգային պրոբլեմներից: Սակայն, ինչպես ցույց է տալիս վերջին մի քանի ամիսների փորձը, Ղարաբաղից հնչող բացասական արձագանքները ըմբռնումով են ընկալվում Հայաստանում եւ Սփյուռքում, համենայն դեպս՝ առայժմ ոչ ոք Ղարաբաղին չի մեղադրել հայությունը մասնատելու մեջ: Ավելին, Ղարաբաղից հնչող հստակ հայտարարությունները Հայաստանում խթանել են առողջ հանրային քննարկումներ: Վերջիվերջո, ոչ ոք չի ժխտում, որ համազգային հարցերում համաձայնություն է պետք, բայց ինչու՞ այդ համաձայնությունը պիտի լինի ազգային շահերին հակասող սկզբունքների շուրջ: Եկեք, ուրեմն, մշակենք իրապես համազգային սկզբունքներ եւ միավորվենք դրանց շուրջ:

Մի քանի տարի առաջ ղարաբաղյան իշխանական վերնախավի ընդերքում մի ինչ-որ մեթոդ է մշակվել, որով ղարաբաղյան իշխանությունը փորձում է հակադարձել սեփական ճակատագրի մասին հարցերին: Ինչ-որ մեկը նստել է տաքուկ աշխատասենյակում եւ հղացել գաղափար առ այն, որ բանակցային գործընթացում Ղարաբաղի դիրքորոշմանն առնչվող հարցերին հարկ է պատասխանել այսպես՝ քանի դեռ Ղարաբաղը չի մասնակցում կարգավորման սկզբունքների մշակման գործընթացին, ապա մտադիր էլ չէ արտահայտվել այդ առիթով: Մույն մեթոդը հաջողությամբ օգտագործվում է պաշտոնական անձանց, նրանց հաշվետու ոչ պետական կառույցների եւ այլոց կողմից, այն նույնիսկ ընդունելի են համարել

քաղաքականության մեջ անփորձ գործիչներ, ովքեր, առանց դույզն ինչ մտածելու, այն դարձրել են դրոշակ, որը ծածանում են առիթը եկած ժամանակ կամ անառիթ:

Մակայն շուտով սույն տրամաբանությունը դադարեց արդյունավետ լինելուց: Այն բանից հետո, երբ մադրիդյան սկզբունքները գաղտնագերծվեցին, իսկ Հայաստանն էլ հայտարարեց, որ ողջունում է դրանք եւ մտադիր է շարունակել բանակցությունները դրանց հիման վրա, Ղարաբաղը հայտնվեց միանգամայն տհաճ ու անհարմար վիճակի մեջ: «Քանի դեռ Ղարաբաղը չի մասնակցում...» առօրյա պատասխանը տրամաբանական հարց է հարուցում՝ «Իսկ ի՞նչ կասեք Հայաստանի մասին»: Եթե Ստեփանակերտը դեմ է, ապա ինչու՞ չի հայտարարում, որ այլեւս հրաժարվում է իր իրավունքները Հայաստանին պատվիրակել նույն այդ սկզբունքների հիման վրա բանակցելու համար: Այս հարցի պատասխանը Ղարաբաղն առայժմ չունի, բայց նման «պաուզան» երկար պահել չի հաջողվելու:

Ղարաբաղյան ղեկավարությունը կամ պիտի խոստովանի սեփական ժողովրդին, որ ինքն էլ է համաձայն մադրիդյան սկզբունքներին եւ մտադիր է հանձնել տարածքները, ընդունել փախստականներին, միջազգային կառույցների խոստացած օգնությունը, «միջանկյալ կարգավիճակն» ու այն ամենը, ինչը մի քանի տարի անց աղետի կհանգեցնի, կամ էլ պիտի Հայաստանին կոչ անի հրաժարվելու բանակցություններից: Երբորդը չկա:

Մադրիդյան սկզբունքների դարաբաղյան արձագանքներն արդեն իսկ սառը ջուր են լցրել դարաբաղյան հիմնախնդրի շուտափույթ կարգավորման մասին խոսող լավատեսների գլխին: Բոլորն էլ հասկացան, որ Ղարաբաղը կարող է լուրջ խոչընդոտ դառնալ, եւ որ չի հաջողվել դարաբաղցիների ինքնապահպանման բնագործը քնեցնել համատարած քարոզչական հիփնոսի տարիներին: Այնպես որ իսկը ժամանակն է, որպեսզի Ղարաբաղն օգտվի հարմար պահից եւ հայտարարի սեփական կենսական շահերի վրա խարսխված իր անսասան դիրքորոշման մասին: Իրավագիտությունն արդարացնում է ինքնապաշտպանության նկատառումներով կատարված սպանությունը: Միջազգային իրավագիտությունը չի կարող չհասկանալ մի ժողովրդի, որը գործում է իր անվտանգությունից ելնելով:

Ստեփանակերտը մեղավորներ է փնտրում ամեն տեղ, բացի Ղարաբաղից

Դավիթ ԿԱՐԱԲԵԿՅԱՆ

Քաղաքագետ

Ստեփանակերտ

Դատելով դարաբաղյան ԱԳՆ-ի հայտարարություններից՝ «մադրիդյան սկզբունքներն» անընդունելի են ԼՂՀ-ի համար, սակայն Երևանը ոչ միայն չի մերժում դրանք, այլև շարունակում է դրանք քննարկել: Հետևաբար, կամ «Այն, ինչ ընդունելի չէ ԼՂՀ-ի համար՝ չի կարող ընդունելի լինել ՀՀ-ի համար» բանաձևն է Լեթայի գիրկը՝ մոռացության գետն ընկել, կամ էլ, չնայած հայտնի հայտարարություններին, Ստեփանակերտն, այնուամենայնիվ, կմիանա բանակցություններին, որոնց հիմքում նույն այդ սկզբունքներն են: Դեպքերի նման զարգացումը ԼՂՀ-ի համար ծայրահեղ ստորացուցիչ կլինի: Ամեն ինչից զատ դա կնշանակի այն, որ նախկինում վերոնշյալ բանաձևով առաջնորդվող երկու հայկական պետականությունների տանդեմը գործում է այնքանով, որքանով թույլատրում են համաշխարհային քաղաքականությունում ազդեցիկ երկրները (դրանցից երեքը ներկայացված են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունում):

Մադրիդյան սկզբունքները ենթադրում են 1993-94 թվականների մարտական գործողությունների ժամանակ սեփական վերահսկողության տակ վերցված տարածքներից դարաբաղյան ուժերի դուրսբերում, ադրբեջանցի փախստականների վերադարձ, հակամարտության գոտում խաղաղապահ ուժերի տեղաբաշխում և այլն: Մի շարք քաղաքագետներ հաճույքով ու բավարարվածությամբ փաստում են հանրաքվեի մասին կետի առկայությունը, մի դրույթ, որը բացակայում էր նախորդ առաջարկություններում: Առանձնակի ընդգծվում է, որ տվյալ հանրաքվեն և դրա արդյունքները

իրավական ուժ են ունենալու, բայց լռության է մատնվում նույն այդ հանրաքվեում այսպես կոչված ադրբեջանական համայնքի մասնակցությունն այն բանից հետո, երբ ադրբեջանցիները նորից կհայտնվեն Ղարաբաղում:

Փաստաթուղթը պատրաստվել է առանց ԼՂՀ-ի մասնակցության: Այսպիսով, ԼՂՀ-ն հայտնվել է երկակի նվաստացուցիչ վիճակում. նախ՝ պիտի ընդունի խաղի՝ իր համար ոչ շահեկան կանոնները, երկրորդ համաձայնվի բանակցություններին մասնակցել «երկրորդ սորտի» բանակցողի կարգավիճակում: Բանակցային գործընթացի ներկայիս վիճակի համար, մասնավորապես այն բանի համար, որ առանցքային դեմքերից մեկը փաստորեն դուրս է մնացել անմիջական բանակցությունների շրջանակներից, դարաբաղյան կուսակցություններն ու առանձին քաղաքական գործիչ-չինովնիկներ մեղադրում են ում ասես՝ ԱՄՆ-ին ու Արևմուտքին, Ռուսաստանին և այլն: Ամենաքիչը քննադատվում են սեփական ղեկավարությունն ու սեփական նիրհած հանրությունը: Ամեն ինչ կատարվում է չինական հայտնի առածին հակառակ՝ «Եթե քո ձեռքի մատներից մեկն ուղղված է ուրիշներին, ապա երեքն էլ ուղղված են հենց քեզ»: Ընդամիս՝ մնացյալ աշխարհին հանդիմանելուն զուգընթաց հանրությունն ու քաղաքական ուժերը շարունակում են իրենց մեկուսիությունը, նիրհածությունն ու անտարբերությունը, ջանալով սխալներ հայտնաբերել անցյալում և դուրյո՞ղ ինչ ջանք չթափելով դրանք ներկայում ուղղելու և ապագայում բացառելու ուղղությամբ:

Այսպես, հանրային կարևոր նշանակություն ունեցող հարցերից ինքնամեկուսանալով՝ դարաբաղյան իշխանությունները բարենպաստ հող են ստեղծել կարգավորման գործընթացում ԼՂՀ-ն սուբյեկտից օբյեկտի վերածելու համար: Ըստ ամենայնի «երկինք բարձրացնելով» նախկին ԽՍՀՄ-ի տարբեր մասերում ապրող մեր հայրենակիցներին և նույնչափ էլ նվաստացնելով դարաբաղցիներին՝ դարաբաղյան կեղծ քաղաքական գործիչներն ու վայ-նախարարները բանը հասցնում էին նրան, որ ԼՂՀ-ն քայլ առ քայլ հայտնվում էր դարաբաղյան հիմնախնդրի քաղաքական կարգավորման բանակցային գործընթացից դուրս:

Ներկայումս դարաբաղցիները զայրանում են նրանով, որ ժողովրդավարական երկրները չեն պաշտպանում մեզ և մեր հարցը առուծախի են վերածել քաղաքական նկրտումների շուկայում: Բայց եկեք կողքից նայենք մեզ՝ ախր, մեր իշխանությունները, ընտրություն չդնելով արտահայտությունների մեջ, սպառնում էին բոլոր նրանց, ովքեր համարձակվում էին քննադատել երկրի արտաքին քաղաքականությունը: Երևանի հետ հարաբերությունները, Մինսկի խմբի հետ կապերը դառնում էին երկրի ներսում ու դրսում քաղաքական կապիտալ ձեռք բերելու միջոց: Ուրեմն, ո՞վ է մեր հիմնախնդիրը առուծախի վերածել:

Հիշում եմ, թե ինչպես էի ապարդյուն փորձում լուծել այսպիսի մի պարադոքս՝ ինչպե՞ս է ստացվում, որ իսկնիսկ նույն ծրագիրն անընդունելի է համարվում, երբ այն ներկայացնում կամ ընդունում է մի քաղաքական գործիչ, և դադարում է անընդունելի լինելուց, երբ այն ընդունում կամ ներկայացնում է մեկ այլ քաղաքական գործիչ: Պարզվում է, որ հաշտեցման հիմնադրույթներն ընդունելի չեն, եթե դրանց համաձայնվում է ոչ դարաբաղցի քաղաքական գործիչը (Լևոն Տեր-Պետրոսյանը), և, համենայն դեպս, բողոքի տեղիք չեն տալիս, եթե այն ընդունում է ծագումով դարաբաղցի քաղաքական գործիչը:

Տարօրինակ է, բայց փաստ՝ Ստեփանակերտի ներկայիս բոլոր դիտողությունները լավագույն դեպքում ուղղվում են միջնորդներին: «Մադրիդյան սկզբունքներ» կոչվող գավեշտի մեղավորներին Ստեփանակերտը փնտրում է ամենուր, բայց ոչ Ղարաբաղում ու Երևանում:

(Խմբագրության կողմից, հոդվածը տպագրվում է մասնակի կրճատումներով, այն ռուսերեն բնագրով ամբողջությամբ կարող եք կարդալ Ստեփանակերտի և Երևանի կրպակներից ձեռք բերած «Անալիտիկոն»-ի տպագիր տարբերակում կամ մեր կայքի ռուսերեն բաժնում)

Հիմնախնդիրն անվերջ քննարկելու փոխարեն հարկ է մշակել և

Իրականացնել կոնկրետ գործողությունների ծրագիր

Ստեփան ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Գիտնական

Ստեփանակերտ

Ոգու ամբողջություն, արհիություն ու անձնագոհություն դրսևորելով՝ մեր ժողովուրդը կարողացավ ոգևորիչ հաղթանակ տանել ազգային-ազատագրական պատերազմում և հասնել Ադրբեջանից լիակատար քաղաքական անկախության: Մենք սպասում էինք, որ հաղթական էստաֆետը կստանանք նաև դիվանագետները, ովքեր մտավոր քրտնաջան, ակտիվ և կազմակերպչական ջանքերի շնորհիվ մեր ազգային-ազատագրական պայքարը կհասցնեն տրամաբանական ավարտին:

Շախմատային լեզվով ասած՝ մենք ունենք շահող դիրք, հաղթանակի հասնելու բոլոր շանսերը, պարզապես մնում է գտնել եզակի ճիշտ քայլերը, մի բան, որ մեզ ոչ մի կերպ չի հաջողվում: Իսկ ահա մեր ընդդիմախոսը, հավանաբար, մեզ գերազանցում է խաղի ուժով, քանի որ նրան հաջողվում է օբյեկտիվորեն դժվարին, խոցելի, փաստացի արդեն տանուլ տված դիրք ունենալով՝ ոչ միայն հմտորեն պաշտպանվել, այլև այնպիսի անսպասելի քայլեր անել, որոնք շփոթության մեջ են գցում մեզ: Մեր նախաձեռնագուրկ կեցվածքը, թուլակամ խաղը, հավանաբար, ընդդիմախոսի մոտ հույսեր են արթնացնում, որ նա ոչ միայն կարող է փրկել ծանր կացությունը, այլև խաղը հասցնել հաղթական ավարտի:

Արդյունքում մի պարադոքսալ իրավիճակ է ստեղծվել, երբ մենք չենք կարողանում աշխարհին հասցնել արևի շողի պես պարզ մեր ճշմարտությունը, իսկ ադրբեջանցիներին հաջողվում է «իրացնել» իրենց ստահող փաստարկները և ամբաստանել իրենց առաջապահ դիրքերը դիվանագիտական ճակատում: Սրա ևս մի ապացույց են դարաբաղյան կարգավորման վերջերս հրապարակված «մադրիդյան սկզբունքները», որոնք կրում են վատ քողարկված ադրբեջանամետ բնույթ:

Ինչու՞ է այսպես ստացվում:

Ինչու՞ մենք հայտնվել ենք պասիվ պաշտպանվողի դերում:

Ինչու՞, բանաստեղծի խոսքերով ասած, դատն անարդարն է վարում, իսկ արդարը արցունք է թափում, անիծելով իր ճակատագիրը:

Այստեղ գայթակղիչ կարող է լինել այս ամենի համար մեղքը միջազգային հանրության անարդարության, դաժանության, տգիտության, կամ էլ մեծ տերությունների ագահության ու եսամոլության վրա գցելը: Իրավիճակի նման ընկալման համար որոշակի հիմքեր կան: Սակայն ոչ միայն փոքրագություն, այլև տգիտություն կլինեն կառչել նման թեթևաքաշ բացատրություններից: Հավանաբար, գոյություն ունի այլ, իրապես հիմնարար պատճառ, որը վճռորոշ կերպով կանխորոշել է դիվանագիտական ասպարեզում մեր անհաջողությունները:

Գիտության դասականները (Էյլեր, Լավուաս, Նյուտոն, Այնշթայն և այլք) գտնում են, որ բնության ու հանրային կյանքի անգամ ամենաբարդ երևույթներն իրենց պատճառների մեջ բավականին պարզ են, և հետազոտողի իրական խնդիրը լեզվական և տրամաբանական միջոցների խնայողական օգտագործմամբ այդ պատճառների շարադրումն է:

Շատ պարզ, պարզից էլ պարզ է այն բանի պատճառը, թե ինչու հայկական դիվանագիտությունն ակնառու հաջողությունների չի հասել: Ըստ էության, դրա պատճառը հետևյալն է: Ցանկացած գործունեություն իրականացվում է գիտելիքների հիման վրա: Եթե այդ գիտելիքները ճշմարիտ ու արժեքավոր են, ապա նրանք անխուսափելիորեն պիտի հանգեցնեն և հանգեցնում են օգտակար արդյունքների: Իսկ եթե գիտելիքները ստահող են, ապա տրամաբանական չի լինի ակնկալել էական ու դրական արդյունքներ:

Մույն տրամաբանական անվիճարկելի դատողությունների ամփոփ արտացոլումն է ձևով զարմանալիորեն պարզ, բայց գործնականում միանգամայն օգտակար այն բանաձևը, ըստ որի ցանկացած

գործում հաջողվում է ճիշտ այնքան, որքան մշակվել ու հաշվարկվել է: Ավելի խիստ, ակադեմիական լեզվով ասած՝ մենք, ըստ էության, խոսում ենք այն մասին, որ դարաբաղյան արդար կարգավորման ուղղությամբ հայության ջանքերի գիտական ապահովման մակարդակը բավարար չէ:

Այլ կերպ՝ ցանկացած փոքրիշատե նշանակալից գործունեության մեջ հաջողության հասնելու համար պետք է այն իրականացնել մանրագնին հաշվարկված գործողությունների նախապես մշակված ծրագրի հիման վրա: Սա այն է, ինչը արդյունավետ գործունեության տեսության մեջ անվանվում է հիմնախնդիրների լուծման նկատմամբ ծրագրային մոտեցում:

Ղարաբաղյան հիմնախնդիրը լուծելու, ինչպես նաև հայության առաջ ծառայած մյուս մարտահրավերներին դիմակայելու համար արդյունավետ գործունեության տեսության այս բնական պահանջը, պարզապես՝ առողջ տրամաբանության այս պահանջը չի պահպանվում: Ինչու: Չի՞ գիտակցվում ծրագրերի մշակման անհրաժեշտությունը: Թե՞ վանում է դրանց մշակման բարդությունը: Հավանաբար՝ և մեկը, և մյուսը: Իսկ դա նշանակում է, որ հայության առաջ ծառայած մարտահրավերները և դրանց դիմակայելու մեր անկարողությունը հետևանք են գիտական թույլ ապահովման, մեր մտավոր անկարողության:

Իսկ ինչպե՞ս բացատրել առկա անմխիթար իրավիճակը:

Այս առումով գիտությունը պարտք է հանրությանը: Բայց, մյուս կողմից էլ, գիտության զարգացման համար բավականաչափ ուժեղ խթան է պետք սոցիալական պատվերի տեսքով, որն էլ պիտի բխի պետական կառավարման ամենաբարձր մակարդակներից (երկրի նախագահ, կառավարություն): Հստակ ձևակերպված պատվեր իչնպես չի եղել, այնպես էլ չկա:

Ի՞նչ է անհրաժեշտ մտավոր թուլությունը հաղթահարելու և դրա շնորհիվ հայության ջանքերի գիտական ապահովման մակարդակը էապես բարձրացնելու համար:

Կարելի է ենթադրել, որ դա մասնագետների գործն է: Իսկ ինչպիսի՞ որակներ պիտի ունենան նրանք՝ իրավիճակի իմաստավորման փոխկապակցված գործառույթները հաջողությամբ իրականացնելու, իրական ու ամենակարևոր հիմնախնդիրները երևան հանելու և դրանց լուծման կոնկրետ գործողությունների ծրագիր մշակելու համար: Դրանից ածանցյալ՝ ինչպիսի՞ն պիտի լինի հիմնախնդիրների լուծման նկատմամբ ծրագրային մոտեցման իրականացման կազմակերպչական ձևը: Հավանաբար, նպատակահարմար կլինի բանակային շտաբի տիպի մարմնի ստեղծումը, դրան վերապահելով ընդհանրապես դարաբաղյան դիվանագիտության և դրա առանձին գործողությունների ծրագրավորման առաքելությունը:

Հարցեր, հարցեր: Այս և այլ շատուշատ հետաքրքիր հարցերի պատասխանները հիմնավորված շարադրված են տողերիս հեղինակի «Հայության հաղթամարտ. մարտահրավերներ և հիմնարար պատասխաններ» գրքում, որն առանց կեղծ համեստության կառաջարկեի խորաթափանց ընթերցողին:

(Խմբագրության կողմից, հողվածը տպագրվում է մասնակի կրճատումներով, այն ռուսերեն բնագրով ամբողջությամբ կարող էք կարդալ Ստեփանակերտի և Երևանի կրպակներից ձեռք բերած «Անալիտիկոն»-ի տպագիր տարբերակում կամ մեր կայքի ռուսերեն բաժնում)

«Արցախի Հանրապետություն». հայտարարություն

«Արցախի Հանրապետություն» նախաձեռնող խումբը համարում է, որ.

- Ղարաբաղյան հարցի վերաբերյալ բանակցությունների փաթեթային տարբերակից կրկին փուլային

վերադարձը, ըստ էության, կանխորոշեց բանակցային գործընթացի եզրափակիչ՝ ներկա փուլի բնույթն ու էությունը: Փոփոխված ներկա պայմաններում հայկական կողմից ակնկալվող որակապես նոր զիջումների դիմաց, որոնք նշված են մադրիդյան դրույթներում, ադրբեջանական կողմը, որպես փոխզիջում, արդեն պարտավորված կլինի տալ իր համաձայնությունը

- Ղարաբաղյան հարցի վերաբերյալ մադրիդյան դրույթներով նախանշված փոխզիջումային տարբերակի ընդունումը վերջին հաշվով, ոչ այլ ինչ է, քան ԼՂՀ-ի (ԼՂԻՄ-ն՝ իր շրջակա ազատագրված տարածքներով) խաղաղ եւ կամավոր հանձնումն ադրբեջանական կողմին՝ առանց այդ տարածքների բնիկ բնակչության:

- Ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորման գործընթացում դեպքերի նման շրջադարձին մեծապես նպաստեցին Հայաստանի Հանրապետության նախկին եւ ներկա իշխանությունների ոչ լեգիտիմ լինելը եւ, որպես դրա հետեւանք, հարցի «սեփականաշնորհումը» իշխանությունների կողմից ու ժողովրդի միտումնավոր մեկուսացումը համապատասխան գործընթացներից: Միաժամանակ, ակնհայտ է նաեւ մեր քաղաքական ուժերի անդեմ եւ կրավորական կեցվածքը հարցի ճակատագրի հանդեպ:

- ԼՂՀ ղեկավարությունը, որը գտնվում է ՀՀ իշխանությունների ազդեցության տակ, պահպանում է հանցավոր լռություն մի հարցի վերաբերյալ, որն առնչվում է երկրի կենսական շահերին եւ ամբողջ հայ ժողովրդի անվտանգությանն ու բուն գոյությանը: Տարիների ընթացքում ԼՂՀ քաղաքացիների մեկուսացումն իրենց քաղաքական հիմնախնդրի լուծման գործընթացներից, հասարակական գիտակցության մեջ արմատավորել է անտարբերության եւ քաղաքական նպաստառության զգացողություններ: Անսկզբունքայնությունը, անտարբերությունն ու պասիվությունը դարձել են ԼՂՀ հասարակական-քաղաքական կյանքի նորմերը: Իրադարձությունների նման ընթացքը հղի է ազգի համար աղետալի հետեւանքներով:

- Նման հեռանկարը ոչնչով արդարացված չէ: Ինքնորոշման անքակտելի իրավունքը, որը իրականացվել է ղարաբաղցիների կողմից ազգային-ազատագրական շարժման միջոցով, արտահայտվում է ԼՂՀ դե-ֆակտո կայացած անկախությամբ, որն իրականացնում է իր բոլոր պետական ֆունկցիաները՝ նույնիսկ շրջափակման դաժան պայմաններում:

- Չկա՝ որեւէ փաստարկ, որով հնարավոր լիներ կասկածի տակ առնել ԼՂՀ ժողովրդի իղձերի եւ գործողությունների օրինականությունը: 1991թ., նախկին ԽՍՀՄ փլուզման պայմաններում, ԼՂՀ-ն օրինական հիմքերով ձեռք է բերել անկախություն եւ որեւէ կապ չունի նույն շրջանում կազմավորված Ադրբեջանի հետ:

- Միջազգային հանրությունը, ելնելով իր քաղաքական շահերից, ի գիտություն չընդունեց եւ հաշվի չնստեց վերոհիշյալ հանգամանքների հետ: Արհամարհելով այն հանգամանքը, որ նախկին Ադրբ. ԽՍՀ տարածքում՝ նորանկախ Ադրբեջանական Հանրապետության ճանաչման պահին, կազմավորվել էին ռազմաքաղաքական վերահսկողության երկու անկախ տարածքներ, միջազգային հանրությունը ճանաչեց Ադրբեջանի սուվերենությունը նախկին Ադրբ. ԽՍՀ սահմաններում: Դրանով իսկ իրավական հիմք ստեղծվեց Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի նկատմամբ հավակնություններ ունենալու համար: Ադրբեջանը դրանում նշմարեց ԼՂՀ-ն ուժային եղանակով ենթարկեցնելու հնարավորություն, սակայն չկարողացավ օգտվել այդ հնարավորությունից եւ ավելի խորացրեց կոնֆլիկտը:

- Համաշխարհային ուժային կենտրոնների կողմից միտումնավոր ստեղծված առկա իրավիճակը ծառայեցվում է նրանց կողմից իրադրությունը սեփական շահերին համապատասխանող հունով ուղղորդելու համար:

- Մինչ օրս միջազգային հանրությունը Ղարաբաղյան հարցի վերաբերյալ իր մոտեցումներում առավելությունը տալիս է Ադրբեջանի տարածքային ամբողջականության սկզբունքին: 2008թ. Արեւմուտքի կողմից Կոստվոյի, իսկ Ռուսաստանի կողմից՝ Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումը, որպես իրավական նոնսենս, ակնհայտորեն վկայում են ի օգուտ երկակի ստանդարտների

գոյության՝ նման կոնֆլիկտային պրոբլեմների լուծման մոտեցումներում, այն է միջազգային հանրության շահագրգիռ ու միտումնավոր մոտեցումների մասին առկա քաղաքական իրողությունների հանդեպ:

- Կարգավորման սկզբունքներում ԵՆԽՎ, ԵԱՀԿ, արեւմուտքի երկրների դիրքորոշումների երկակիությունը, հիմնված միաժամանակ ինքնորոշման եւ տարածքային ամբողջականության սկզբունքների վրա, ոչ այլ ինչ են, քան հնարավորության ընձեռնում Ադրբեջանին՝ հզորացնելու իր ռազմական ներուժը, այն կիրառելու նպաստավոր պահին առավելության հասնելու նպատակով: Արեւմուտքն այսօր, փաստորեն, հանդես է գալիս որպես Ադրբեջանի բացահայտ ռեանշիստական նկրտումների հովանավոր եւ նրա ռազմական մեքենայի հզորացման ֆինանսական աղբյուր՝ նույնիսկ այն պարագայում, երբ Ադրբեջանը չի էլ թաքցնում իր ագրեսիվ պլանները ԼՂՀ նկատմամբ: Արեւմտյան երկրների նման դիրքորոշման հիմքում ընկած են խիստ որոշակի քաղաքական եւ տնտեսական շահեր:

- Եթե դա այդպես չլիներ, ապա Արեւմուտքն ուներ, իսկ այսօր՝ փոքր պետությունների անկախության ճանաչման փաստերից հետո, առավել եւս ունի լիարժեք իրավունք եւ հնարավորություն ճանաչել ԼՂՀ անկախությունը եւ դրանով իսկ վերջնականապես լուծել Ղարաբաղյան խնդիրը:

- Քանի դեռ դա չի արվում, Ադրբեջանին ընձեռվում են նորանոր հնարավորություններ: Ադրբեջանի միլիտարիզացված գաղափարաբանության պրոպագանդումը սեփական երկրում եւ միջազգային ասպարեզում, նրա ղեկավարության անթաքույց ռեանշիստական հայտարարությունները, միարժեքորեն մատնանշում են, որ այդ երկիրը ձգտում է ամեն գնով հետ վերադարձնել անցած պատերազմում կորցրածը՝ նույնիսկ նոր պատերազմ սանձազերծելու գնով:

- Նման իրավիճակն իր մեջ մեծ սպառնալիք է պարունակում ԼՂՀ ճակատագրի համար: Հայ ժողովուրդը պետք է համախմբվի եւ շարունակի իր պայքարը՝ իր պատմական Հայրենիքում, ներառյալ ամբողջ Արցախի տարածքը, պետականության ստեղծման եւ կայացման պատմական իր իրավունքի պահպանման գաղափարի հիման վրա:

- Այսօր, ազգային նշանակության եւ բախտորոշ հարցերը (այդ թվում նաեւ Ղարաբաղյան հարցը) ամբողջապես կախված են հայ ժողովրդի կամքից եւ լուծումներ գտնելու ունակությունից, քանի որ ներկա մեր քաղաքական էլիտան եւ ազգային ղեկավարությունը չեն արտահայտում սեփական ժողովրդի իրական շահերը՝ ոչ ներքին, ոչ էլ արտաքին քաղաքական ասպարեզներում:

- Ներկայում Արցախի կողմից վերահսկվող տարածքների իրողությունը հետեւանք է Ադրբեջանի կողմից իրականացված ռազմական ագրեսիայի կասեցման, որը նպատակ ուներ ոչնչացնել եւ տեղահանել այդ շրջափակման մեջ գտնվող եւ արտաքին աշխարհից մեկուսացված տարածքի բնիկ հայկական տարրին: Ադրբեջանի կողմից սանձազերծված այդ պատերազմում հայերը կարողացան պաշտպանել իրենց ազատությունը եւ ազատագրել նաեւ իրենց պատմական հայրենիքի մի մասը: Չնայած Ռուսաստանի կողմից 1994-ին գործադրած ահռելի ճնշումներին, որոնք միտված էին հակամարտության գոտում խաղաղարար առաքելության իրականացման միջոցով ԼՂՀ տարածքը իր ռազմական վերահսկողության տակ վերցնելուն, ԼՂՀ-ն կարողացավ պահպանել ինքնուրույն ռազմական հսկողությունն իր ամբողջ տարածքի նկատմամբ եւ վանել այնտեղ երրորդ ուժերի հայտնվելու հավանական վտանգը:

- Ադրբեջանցիների կողմից չհաղթահարված ազգային մերժողականությունը հայերի նկատմամբ, որն այսօր արտահայտվում եւ դրսևորվում է նույնիսկ պաշտոնական մակարդակով, ազգային տարբաժանումն ու սեզրեզացիոն քաղաքականությունը, որոնք դրսևորվեցին Սումգայիթում իրականացված հայերի ցեղասպանությամբ: Հայերի բռնի տեղահանումը Հյուսիսային Արցախից, Կիրովաբադից, Բաքվից, Ադրբեջանի մյուս շրջաններից, ի վերջո, անհաղթահարելի պրոբլեմներ են ստեղծել կատարված գործընթացների շրջելիության եւ փոխըմբռնման ինչ-որ ելակետի վերադառնալու կամ էլ ինչ-ինչ պայմաններով փոխզիջման հասնելու ճանապարհին:

- Իրավական տեսանկյունից դարաբաղցիները կարողացան պահպանել ինքնորոշված ԼՂՀ

անկախությունը եւ հակառակորդի կողմից իրենց պարտադրված պատերազմի արդյունքում հաստատեցին ազգամիջյան համագոյակցության այն սահմանները, որոնք բնորոշում են այսօր գոյություն ունեցող ուժերի իրական հաշվեկշիռը երկու հարեւան ժողովուրդների միջեւ: Անհերքելի է, որ նշված հաշվեկշռի պատկերը կարող էր եւ էապես տարբերվել այսօր առկա արդյունքից: 1994-ի գարնանը մեծ թափ եւ հզորություն ստացած ԼՂՀ-ի ռազմական մեքենան կարող էր Ադրբեջանին պարտադրել եւ ավելի ծանր պայմաններ ընդհուպ մինչեւ կապիտուլյացիա եւ պատմական Արցախի ամբողջ տարածքի անցումը ԼՂՀ վերահսկողության տակ: Այսօր մենք ելնում ենք կայացած իրողություններից, սակայն դրանք եւ միայն դրանք պետք է հանդես գան որպես ելակետ ցանկացած բանակցություններում:

- Ղարաբաղյան խնդրի կարգավորման գործընթացի մեջ ներգրավված հայ քաղաքական էլիտան, իր աշխարհընկալմամբ հանդիսանալով խորհրդային կայսերապաշտական գաղափարախոսության արգասիք, այդպես էլ չկարողացավ ձեռքբերել եւ դուրս գալ խորհրդային գաղափարական մեղադրանքների լծից: Հենց այդ պատճառով է, որ անցած պատերազմի արդյունքներն ու ձեռքբերումները նրանց կողմից չեն ընկալվում որպես համարժեք հատուցում խորհրդային քաղաքական համակարգի թելադրանքին, ընդհանրապես, եւ Ադրբեջանին էլ՝ մասնավորապես: Նույնիսկ խորհրդային կայսրության փլուզումը 1991-ին հայ քաղաքական ղեկավարության վրա որեւիցե սթափեցնող ազդեցություն չընդդեգ: Չափից դուրս հզոր էր կայսերական գաղափարական ճնշման ներգործությունը հետխորհրդային հայ քաղաքական էլիտայի աշխարհընկալման եւ ազգային ինքնագիտակցության վրա: Հայկական քաղաքական էլիտան փաստորեն իր վրա վերցրեց իրեն պարտադրված մեղքի զգացողությունը: Որպես հետեւանք, բարդությամբ կարգավորված հայկական քաղաքական էլիտան ընդունեց ԵԱՀԿ ձեռնարկով նախանշված հաշտության պլանները, որոնք պարտադրում են հայկական կողմին զիջումների գնալ ի նպաստ պատերազմում պարտված հակառակորդի եւ գրավ դնել իր բոլոր նվաճումները, ընդամենը պարտված հակառակորդ Ադրբեջանից զինադադարի կամ հաշտության համաձայնություն ստանալու դիմաց:

- Նկարագրված պայմաններում ընթացող բանակցությունները չեն կարող բերել ոչ մի բանի, բացի ագրեսիայի սպառնալիքի պահպանումից: Ստեղծված իրավիճակում կամագուրկ եւ տհաս հայ քաղաքական էլիտան անընդունակ է փոխել առկա քաղաքական իրողությունները: Իրավիճակը վատթարանում է նաեւ նրանով, որ գործող իշխանությունների ընդդիմադիր ուժերը ղեկավարվում են ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից, որն իր հերթին հանդիսանում է այդ նույն էլիտայի բաղկացուցիչ եւ հիմնական հատվածներից մեկը:

- Ստեղծված իրավիճակում հայկական կողմի համար բացարձակապես անընդունելի է ազատագրված տարածքների շուրջ սակարկության քաղաքականությունը: Այդ դիրքորոշումն իրեն վերջնականապես սպառել է եւ անհերթել է իր իսկ էությանը: «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» անվանումը կատարել է միջազգային ասպարեզում իր քաղաքական ֆունկցիան եւ այսօր արդեն կարելի է համարել այն ավարտված: Ժամանակն է եւ անհրաժեշտություն է շրջել հայ պատմության այդ էջը: Այսուհետ խոսքը կարող է գնալ միայն մի ամբողջական ռազմաքաղաքական միավորի Արցախի Հանրապետության կողմից իրականացվող պետական քաղաքականության մասին: Այդ միավորը մինչ օրս էլ շարունակում է մնալ իրոք ազատ ու անկախ, քանզի այնտեղ շարունակում է թեւածել հայրենիքի ազատարար պաշտպանների ազատ ոգին: Այդ ոգին սնվում է տեր կանգնելու, կայացման եւ հայրենի տարածքներում ստեղծարար կյանքի հարության գաղափարներով: Իր պատմության, իր երկրի, իր ճակատագրի միակ ու իսկական տերը ժողովուրդն է:

Ըստ այդմ.

1. ԼՂՀ ղեկավարությունը պետք է հայտարարի ազատագրված տարածքները որպես ազգային շահերի կենսական կարեւորության գոտի

2. Անհրաժեշտ է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» անվանումը վերանվանել «Արցախի Հանրապետություն»:

3. ԼՂՀ ղեկավարությունը պետք է դիմի ամբողջ հայ ժողովրդին ազատագրված տարածքներում ազատ տնտեսական գոտու ստեղծման գաղափարի շուրջ միավորվելու եւ համախմբվելու կոչով, որպես տնտեսության բնագավառում ադրբեջանական առավելությունը հավասարակշռելու միակ միջոց: Համազգային նպատակային հիմնադրամ, մարդկային, նյութական եւ այլ ռեսուրսները պետք է ուղղվեն Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ ռազմական եւ տնտեսական բնագավառներում արդեն իսկ առկա անհամաչափության վերացմանը:

4. Մոտակա տարիների ընթացքում հայ ժողովուրդը պետք է կարողանա ապահովել մոտ երեք տասնյակ բնակավայրերի կառուցում ազատագրված տարածքներում, բնակեցնել այնտեղ մոտ 50000 փախստականների, ապահովել ենթաշրջանի տնտեսական վերելքը՝ իր զարգացած սոցիալական ենթակառուցվածքներով:

Դեմոկրատիայի գիտակցումը թուրքերի համար նշանակում է իրենց պասիոնար վանդալիզմի վերջը, իսկ հայերի համար այն պետք է նշանակի ազգային ինքնաբավության եւ իր հանդեպ ներքին վստահության ու հավատի ձեռքբերում: Եվ դա պետք է մղի մեզ նորանոր ձեռքբերումների:

«Արցախի Հանրապետություն» նախաձեռնող խմբի հիմնադիր ժողովի որոշումը

մենք՝ ներքոստորագրողներս, համարելով «Արցախի Հանրապետություն» նախաձեռնող խմբի կողմից հայտարարած դրույթները, որպես գաղափարական հենք ապագա անելիքների համար, որոշում ենք որպես վերջնական նպատակ հասնել

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը» վերանվանվի «Արցախի Հանրապետություն»:

2. Ազատագրված տարածքները հայտարարվեն որպես ազգային շահերի կենսական կարեւորության, ինչպես նաեւ ազատ տնտեսական գոտի:

3. Ստեղծվի համազգային նպատակային դրամագլուխ՝ ազատագրված տարածքները հայ փախստականներով բնակեցնելու, այնտեղ տնտեսական վերելքն ապահովելու եւ, դրանով իսկ, Ադրբեջանի նկատմամբ ուժերի գոյացած անհամաչափությունը վերացնելու համար:

Եվ անցկացնել Արցախի բնակչության մեջ ստորագրահավաք՝ ի պաշտպանություն վերոհիշյալ երեք կետերի:

Ստեփանյան Լուսինե Շահենի
Միրզոյան Յանինա Կարենի
Միրզոյան Դիանա Կարենի
Շադյան Գոռ Գրիգորիի
Գրիգորյան Կարեն Կամոյի

ք. Հաղրութ 16.07.09

Իշխանության եւ ազգի շահերը՝ հակառակ նժարին

Հարցազրույց “Արցախի Հանրապետություն” նախաձեռնող խմբի հիմնադիր **Էմիլ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ** հետ

-Արցախում ստեղծվեց “Արցախի Հանրապետություն” նախաձեռնող խումբը: Ինչո՞ւ հիմա, չէ որ զարգացումներն Արցախի շուրջ սկսվել են վաղուց:

-Մայնդորֆյան հռչակագրի ստորագրումից հետո պարզ դարձավ, որ Ղարաբաղյան հարցի շուրջ փոփոխություններ են սպասվում: Իսկ նախաձեռնող խմբի հիմնումը պայմանավորված էր Մոսկվայում կայանալիք հանդիպումով: Նախաձեռնող խումբը պետք է ցույց տար, որ արհամարհված Ղարաբաղը գոյություն ունի իր սեփական կամքով եւ հստակ դիրքորոշումով, եւ իր մոտեցումները հարցի վերաբերյալ հակառակ են առաջարկվող Մադրիդյան սկզբունքներին: Նախաձեռնող խումբը պատասխան էր իշխանությունների կողմից կատարած սխալ, ոչ հայանպաստ, ոչ ազգային մտածողությանը հարիր մոտեցումներին: Խումբն ազդարարեց, որ կա մեկ այլ մոտեցում, կան տրամադրություններ, որոնք կարող են արգելակել իշխանությունների գործողությունները: Նաեւ ազդարարվեցին վտանգները:

-Խումբն ունի իր նպատակները, որոնցից մեկը հանրապետությունը Արցախի կոչելն է: Արդեն հնչում են կարծիքներ այս կետի վերաբերյալ, թե Արցախի Հանրապետությունը ամրագրված է Սահմանադրությամբ: Ի՞նչ իմաստ է դրված այս կետի հիմքում:

-Պարզ է, որ “Արցախի Հանրապետություն” անվանումն ամրագրված է Սահմանադրությամբ, սակայն շատ սիմվոլիկ բնույթ է կրում: Սահմանադրությամբ ամրագրված երկակի անվանումը՝ ԼՂՀ եւ Արցախի Հանրապետություն, արտացոլում է ներկայիս հայ պաշտոնական (եւ ինչու միայն) քաղաքական մտքի կոմպրոմիսային հիմնավորմամբ մտածողության երկակիությունը: Այսինքն ԼՂՀ-ն մատնանշում է տենդենց ներկայիս իրողություններից հետդարձ դեպի ԼՂԻՄ տարածքին, իսկ Արցախի Հանրապետությունը հակառակը՝ ներկայիս տարածքային տիրույթից դեպի պատմական Արցախը: Որպես հետեւանք՝ սեփականաշնորհման հարցը նույն ձեւով չէ իրականացվում ազատագրված տարածքներում, ինչպես ԼՂՀ այլ տարածքներում, ընդհանրապես կարելի է ասել, որ այն փաստը, որ ազատագրված տարածքները ներգրավված չեն տնտեսականապես, մշակույթի առումով, ուրեմն դա ուղղակի դատարկ խոսք է: ԼՂՀ օրենքները լիարժեք չեն տարածվում եւ իրագործվում Սահմանադրությամբ հռչակված տիրույթում, ինչը միանշանակ պետք է փոխվի Արցախի Հանրապետություն անվանմամբ: Բանակցային սեղանին տարածքները դրված են որպես առեւտրի օբյեկտ, ուրեմն այդ տարածքներն այլ ազգային նպատակների համար չեն կարող կիրառվել: Տարածքները վերահսկվում են նաեւ ԵԱՀԿ-ի կողմից: Խումբն առաջին կետը դիտում է մյուս կետերի հետ միասին մեկ ընդհանրական կոնտեքստում՝ ինտեգրել ազատագրված տարածքները Արցախի հանրապետության ներկա տիրույթի մեջ:

-Առաջարկվում է ստեղծել ազատ տնտեսական գոտի եւ վերաբնակեցնել ազատագրված տարածքները: Եթե հաջողվի համապատասխան թվով ստորագրություններ հավաքել, Ձեր կարծիքով, Արցախի իշխանությունները կգնա՞ն այդ քայլին: Ի՞նչ ակնկալիքներ ունեք նրանցից:

-Ըստ նախաձեռնող խմբի հիմնադրույթների՝ վերաբնակեցումը պետք է կատարվի ամբողջ հայության ֆինանսական, տնտեսական, ֆիզիկական եւ այլ նյութական ներուժով: Մեր կարծիքն այն է, որ եթե նախաձեռնող խումբը կարողանա այնքան ստորագրություն հավաքել, որ ապացույց լինի Արցախի եւ Հայաստանի իշխանություններին, որ սա ժողովրդի կամքն է, եւ եթե ժողովուրդը հետամուտ լինի դրա իրագործմանը, այդ դեպքում, ես կարծում եմ, իշխանությունների համար կստեղծենք լուրջ պրոբլեմներ, իսկ հաղթահարելի, թե անհաղթահարելի՝ դա այլ խնդիր է: Եթե հաղթահարեն, շատ լավ, իսկ եթե ոչ, ապա դա խնդիր կդառնա ժողովրդի համար, ժողովուրդը պետք է ինքը քաղաքականապես հաղթահարի այդ պրոբլեմները: Ստորագրահավաքը ի ցույց կդնի ժողովրդի հավաքական կամքը, ուժը եւ պատրաստակամությունը նորանոր ձեռքբերումների:

-Այսինքն Դուք կարծում եք, որ եթե իշխանությունները չկատարեն նշված կետերը, ապա ժողովուրդը ոտքի կկանգնի՞ ընդդեմ իշխանությունների:

-Մեր տրամաբանությունը հետեւյալն է, որ եթե ժողովուրդն ուզում է մի բանի հասնել եւ գտնում է, որ իրավասու է, որ իր տեսակետն արդարացի եւ ճիշտ է, իսկ իշխանությունները չեն աջակցում, ուրեմն խնդիրը դառնում է ներքին քաղաքական: Մենք ունեցել ենք այդ կարգի խնդիրներ, եւ իշխանությունները կանգնել են ժողովրդի կողքին այնքանով, ինչքանով կարողացել են: Եթե ժողովուրդը տեսնի, որ այսուհետ անհնարին է իրենց հետ կապել հույսերը, պետք է դիմի այլ քայլի՝ իշխանափոխության:

-Գործունեության ընթացքն ի՞նչ է հուշում, արդյո՞ք, ժողովուրդը պատրաստ է նման քայլի դիմելու:

-Մենք սկսել ենք այդ հույսով եւ դեռ վաղ է կարծիք կազմել: Նախաձեռնող խումբն առայժմ գործում է երկու շրջկենտրոններում՝ Ասկերանում եւ Հաղարթում, ինչը հնարավորություն չի տալիս ամփոփել եւ խոսել հնարավորությունների մասին: Պետք է կարողանանք այնպիսի կառույց ստեղծել, որպեսզի աշխատանք ծավալվի մյուս շրջկենտրոններում եւ Ստեփանակերտում: Դժվարությունն այն է, որ ժողովուրդը դուրս է մնացել իրեն իսկ վերաբերող պայքարի գործընթացից: Իշխանությունները կարողացել են խնդիրը սեփականաշնորհել, ուզուրպացիայի ենթարկել, եւ ժողովուրդը խնդրին օտար աչքերով է նայում: Խնդիրը քննարկման դնելով՝ պետք է նաեւ հնարավորություն տանք ժողովրդին հասկանալ դրա լուծման եւրթյունը, բարդությունը եւ վերադարձնենք նրան խնդրի նկատմամբ տիրոջ զգացողությունը:

-Ո՞ր իշխանությանն եք մեղադրում ստեղծված իրավիճակում:

-Բոլոր իշխանություններին: Սկսած հարցի սկզբից՝ 1991 թ-ից: Միայն երբ բերեցին իրենց հետեւանքները, եւ բոլորը մեղավոր են, որ խնդիրը չենք կարողանում տեղափոխել այլ ասպարեզ: Ինչի համար էլ ունենք բավարար իրավական եւ ռազմական հիմքեր: Ժողովրդի օտարումը խնդրո առարկայից դեռ չի նշանակում ժողովրդի անպատասխանատվության ձեւավորում: Համարում ենք, որ վիճակն անհույս չէ, եւ վերջին խոսքը ժողովրդինն է:

-Եթե զուգահեռներ անցկացնենք 1988թ. եւ այսօրվա ժողովրդական տրամադրությունների միջեւ, ի՞նչ կարձանագրեք:

-Մեծ բարոյական, քաղաքական անկում ենք ապրել: 1988 թ-ին մենք ունեցել ենք վերելք, ազգի միաբանություն հարցի վերաբերյալ, իսկ այսօր՝ տարակարծություն, կատարյալ անգիտություն: Ժողովուրդն իրավունք ունի իր հույսերը կապել իր կողմից ընտրած իշխանությունների հետ, բայց քանի որ ժողովրդի կողմից ընտրված չէ Հայաստանում, եւ որպես շարունակություն Ղարաբաղում, խնդիրը մեզանում բարդանում է, որովհետեւ մեծատիրական երկրները նրանց օգտագործում են, իսկ նրանք էլ չեն կարող ազգի շահը ներկայացնել: 1988 թ-ի եւ այսօրվա տարբերությունն այն է, որ ժողովուրդը կարողացավ այն ժամանակ հաղթահարել բոլոր խնդիրները, իսկ այսօր այնքան ենք շեղվել, որ գրեթե սահմանային կետի ենք հասել: Տարբերություններից մեկն էլ այն է, որ ժողովուրդն իրավունք ունի ապավինել իր պետության եւ բանակի ուժին: Այս հանգամանքը ենթադրում է, որ պետությունը պետք է հետապնդի գերագույն ազգային շահեր, մի բան, որ ժողովրդի համար տեսանելի չէ ազգային կյանքի ոչ մի բնագավառում: Ժողովրդի գերագույն ակնկալիքները Ղարաբաղյան խնդրում անհասանելի են թվում, ինչպես նաեւ մյուս ասպարեզներում: Պետք է նաեւ նշենք, որ արտաքին ճնշումները կոնֆլիկտի կողմերի եւ առավել եւս հայերիս վրա պայմանավորված է համաշխարհային ճգնաժամով, ինչը հայկական կողմի վրա անդրադառնում է տնտեսական եւ սոցիալական դժվար կացությամբ:

-Գործընթաց սկսելն այսօ՞ր է ավելի հեշտ, թե՞ 1988-ին:

-Այսօր ավելի դժվար է, որովհետեւ 1988 թ. հայտարարված վերակառուցումը, խոսքի ազատությունը շատ բարենպաստ պայմաններ էին ստեղծում, որպեսզի ժողովուրդը թոթափի կաղապարները: Այսօր մենք պետք է փոխենք հարցի հիմքը՝ տեղափոխելով իրավական հարթություն: Պետք է ասենք, որ թույլ չենք տա ոտնահարել մեր իրավունքները, իշխանությունները պետք է ասեն սա միջազգային ասպարեզում, բայց նրանք պետք է լեզվափոխվեն, որպեսզի նրանց հետ հաշվի նստեն նաեւ դրսում: Մենք որեւէ երաշխիք

չունենք, որ այս իշխանությունները կարող են հարցի վերաբերյալ ազգային դրսևտրումներ ցուցաբերել:

-Ո՞վ կարող է փոխարինել այսօրվա իշխանություններին, այսօր այդ ուժը կա՞ Հայաստանում:

-Այդ ուժը դեռևս չի էլ երևում, բայց ազգային գիտակցությունը ժողովրդի մեջ չի մահացել, այն կենդանի է: Կգա ժամանակը՝ այն կարթնանա եւ իր ուրույն տեղը կզբաղեցնի: Որպես կուսակցություն կամ խմբավորում դեռևս այդ ուժն ասպարեզում չկա: Ներկայիս հայաստանյան քաղաքական դաշտում գերիշխում է Ղարաբաղյան հարցի վերաբերյալ կոմպրոմիսային մոտեցումը, ինչը կործանարար է մեզ համար: Պրոբլեմները բերում են իրենց լուծողներին: Իսկ եթե այսօր նրանք չկան, նշանակում է նրանց մոտ անձնական, կորպորատիվ շահն է գերակայում, նրանց արտոնություններ են տրվել, եւ նրանք չեն ազգային մտածողության կրողը:

-Մա՞ է պատճառը, որ նախաձեռնող խմբերը կազմված են երիտասարդներից:

-Այո: Մենք հասկացել ենք, որ այն մարդիկ, ովքեր նույնիսկ մասնակից են եղել պատերազմին, նրանց հետ հույս կապելն այսօր արդիական չէ: Ժամանակը կարգադրեց տեսնել նոր սերունդ, որ կաշկանդված չէ հարցի շուրջ, գերծ է իշխանությունների ազդեցությունից: Իսկ այս նախաձեռնությունը հստակ ուղղված է ընդդեմ իշխանությունների քաղաքականությանը: Նոր սերունդը, որը ծնունդ է առել եւ կազմավորվել վերջին 20 տարվա ընթացքում, պետք է իրենց հայրերի, զոհված ազատամարտիկների պայքարի ոգով շարունակեն ազգային այս պատմական արշավը դեպի իր հաղթական ավարտը: Նոր սերունդը պետք է պատվով մտնի այս պայքարի մեջ եւ շարունակի այն:

-Նախաձեռնող խմբի գործունեությունն ի՞նչ կարող է փոխել Հայաստանում:

-Հայաստանի իշխանությունները փաստի առաջ են կանգնելու, եթե ժողովուրդն Արցախում կարողանա դրսևտրել իր կամքը: Այսօրվա իշխանությունները կամ կընդունեն այս մարտահրավերը եւ կձեռնարկեն համապատասխան քայլեր, կամ էլ, որ ավելի հավանական էմ համարում, չեն անի այդ եւ ստիպված կլինեն թողնել իշխանությունը: Եթե հարցին այսպես ենք նայում, ապա հասկանում ենք, որ իշխանությունների եւ ազգային շահերը հակառակ նժարների վրա են: Հայաստանի օլիգարխիկ վերնախավն Արցախի շահը դնում է հակառակ իր շահին:

-Գուցե այդ դեպքում գործընթացն արժեր սկսել Հայաստանում:

-Կան մարդիկ, որոնք զբաղվում են իշխանափոխության հարցերով, սակայն դարաբաղյան հարցը նրանց համար էական չէ: Լեւոն Տեր-Պետրոսյանն այսօր սպասողական վիճակում է Ղարաբաղի հարցում, սպասում է, որպեսզի օգտվի դրանից: Ընդդիմությունն ուզում է իշխանությունների ձեռքով հարցի լուծում ունենալ: Մենք կարծում ենք, որ հանգուցալուծումը պետք է տրվի Արցախում, ինչը կհանգեցնի փոփոխությունների նաեւ Հայաստանում, եթե համարժեք արձագանքի արժանանա նաեւ Հայաստանում:

-Եթե նախաձեռնող խմբին հաջողվի ապահովել Արցախի ժողովրդի ակտիվացումը, ինչպիսի՞ արձագանք էք սպասում Ադրբեջանից:

-Ինչ պիտի ասի Ադրբեջանը, եթե ժողովուրդն այդպես է ուզում: Մենք նրանց փաստի առաջ ենք կանգնեցնում, ասում ենք, որ տարածքներն ինտեգրված են, որ այստեղ պետք է ապրեն միայն հայեր: Իսկ եթե թշնամին առաջարկի պատերազմ, ժողովուրդը պետք է դիմակայի իր համախմբվածությամբ: Ադրբեջանն այսօր պատերազմելու ոչ մի հնարավորություն չունի:

-Ի՞նչ փոփոխություններ տեղի կունենան հարցի շուրջ միջազգային ասպարեզում, եթե մենք լուծենք հարցը տեղում:

-Հետեւանքները միանշանակ պարզ են՝ Հայաստանին իրավունք չի տրվում բանակցություններ վարել

տարածքների շուրջ: Հանում ենք բանակցությունների սեղանից տարածքների խնդիրը: Արցախը մի նոր ձեռով իր անկախությունը ձեռավորած, իրավունք չի տա իր խնդիրը խառնել այլոց շահերին: Առաջարկում ենք շատ կտրուկ ձեռով կողմ դառնալ շահառուներին: Արցախը հռչակում է իրեն նոր որակի պետություն եւ հայ ժողովրդին միավորում է իր շուրջը, իսկ սա անկախության շատ ավելի մեծ դրսևորում է, քան երբեմն ունեցել է: Սա ոչ վիրավորական է Հայաստանի համար, ոչ էլ դժվարություններ է բերում: Մենք պետք է հասնենք այն նպատակին, որ թե Արեւմուտքը, թե Ռուսաստանը, որոնք սանձազերծել են Ղարաբաղյան պատերազմը Ադրբեջանի կողմից եւ ճանաչել են հետագայում Աբխազիայի եւ Հարավային Օսիայի անկախությունը, չեն կարող եւ իրավունք չեն ունենա այս խնդրին միջամտելու: Արցախի կողմից ձեռնարկած քայլերի հետեւանքով:

-Ի վերջո, ո՞րն է լինելու Արցախի վերջնական կարգավիճակը: Արդյո՞ք միացման գաղափարն այլեւս չի դիտարկվում:

-Յուրաքանչյուր առողջ մտածող հայի համար ԼՂՀ-ն Հայաստանի անքակտելի մասն է, ընդամենը նրա մարզերից մեկը: ԼՂՀ-ն հայ ոգու ընդարձակման ներկայիս վկայությունն է իրեն ի վերուստ տրված եւ պատկանելիք տարածքներում: Լիարժեք միացումը կլինի մոտակա ապագայում, իսկ այսօր ԼՂՀ-ի (Արցախի հանրապետության) անկախությունը միացման հասնելու համար մանեւրելու հնարավորությունն ընձեռող քաղաքական լծակ է: Այն իրեն կապառի, երբ ԼՂՀ-ն կճանաչվի միջազգային հանրության կողմից, կամ արդեն պարզ կդառնա այն ի չիք դարձնելու հարցը:

Զրույցը վարեց Շուշան ՍՏԵՓԱՆՅԱՆԸ
Lragir.am

Ողջույնի խոսք

Արցախի Հանրապետության «Արցախի Հանրապետություն» նախաձեռնող խմբին

Սիրելի հայրենասերներ,

Ուրախությամբ ծանոթացանք ձեր նախաձեռնող խմբի հիմնադիր ժողովի հայտարարությանը եւ որոշմանը, որն առավել ողջունելի ու կարելու է այնքանով, որքանով որ արցախյան հակամարտության շուրջ վերջին զարգացումներն ուղղակիորեն վտանգում են արցախահայության անկախ պետականության ամբողջականությունն ու անվտանգությունը: Վստահ եղեք, որ Հայաստանի միլիոնավոր քաղաքացիները կիսում են ձեր հնչեցրած մտքերը եւ միակամ են՝ արցախցի քույրերի ու եղբայրների հետ թույլ չտալու մի քանի հազար խիզախ հայորդիների կյանքի գնով ազատագրված Արցախի ինքնությունը վտանգող որեւէ փաստաթղթի ստորագրում կամ բովանդակ հայության արդար դատից նահանջողական որեւէ քայլ: «Ժառանգությունը» իր բոլոր ջանքերն է ներդրել եւ հետագայում էլ ամեն ինչ անելու է՝ ոչ միայն ձեր որոշման մեջ նշվածների, այլ նաեւ Արցախի միջազգային ճանաչման, ինչպես նաեւ ազատամարտի ընթացքում կորսված որոշ տարածքների վերադարձման համար:

Ցավոք սրտի, Հայաստանի երեք նախագահներն էլ 20-րդ դարավերջի՝ համայն հայության հաղթական ազատամարտը հաճախ են ուղղորդել ներքաղաքական կյանքում անձնական կամ խմբակային ինչ-ինչ խնդիրներ հանգուցալուծելու համար: Ազգային-պետական արդի գերխնդրի նման շահարկումները, սակայն, միշտ հանդիպել են հայ ժողովրդի հավաքական իմաստությանը, որի դրսևորումներից մեկն էլ ձեր երիտասարդական ազնիվ նախաձեռնությունն է:

Մեկ անգամ եւս ողջունելով «Արցախի Հանրապետության» ծնունդն ու առաջին «ճիչը», հույս ենք հայտնում, որ ձեր հետագա հայրենասիրական նախաձեռնություններում մինչեւ վերջ հետեւողական կլինեք՝ հանուն ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ:

Զարուհի ՓՕՍՄԱՆՁՅԱՆ

17.07.2009 թ.

Ստորագրահավաք

«Արցախի Հանրապետության» նախաձեռնող խմբի հիմնադիր ժողովի որոշումը

մենք՝ ներքոստորագրողներս, համարելով «Արցախի Հանրապետություն» նախաձեռնող խմբի կողմից հայտարարած դրույթները, որպես գաղափարախոսական հենք ապագա անելիքների համար, որոշում ենք որպես վերջնական նպատակ հասնել՝

1. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը» վերանվանվի «Արցախի Հանրապետության»:
2. Ազատագրված տարածքները հայտարարվեն որպես ազգային շահերի կենսական կարևորության, ինչպես նաև ազատ տնտեսական գոտի:
3. Ստեղծվի համազգային նպատակային դրամագլուխ՝ ազատագրված տարածքները հայ փախստականներով բնակեցնելու, այնտեղ տնտեսական վերելքն ապահովելու եւ դրանով իսկ Ադրբեջանի նկատմամբ ուժերի գոյացած անհամաչափությունը վերացնելու համար:

Եւ անցկացնել Արցախի բնակչության մեջ ստորագրահավաք՝ ի պաշտպանություն վերոհիշյալ երեք կետերի:

Կարապետյան Աստղիկ Համլետի
Կարապետյան Սարգիս Համլետի
Բաղայան Մերի Անդրեյի
Սարգսյան Լիլիթ Լեւոնի
Գասպարյան Ալեն Վյաչեսլավի
Իսրայելյան Գագիկ Իսրայելի

ք.Ասկերան
04.08.09թ.

Ողջույնի խոսք

Միբելի հայորդիներ,

Ողջունում եմ Ձեր հիմնադիր ժողովի որոշումը, որով Արցախում բնակվող հայերն իրենց ձայնը հասու դարձրին համայն հայությանը:

Հայ-ադրբեջանական հակամարտության կարգավորման ներկա գործընթացը եւ վերջին զարգացումներն ուղղակիորեն վտանգում են Արցախում բնակվող հայերի ֆիզիկական անվտանգությունը, ՀՀ, Արցախի՝ ազատագրված մեր Հայրենիքի, տարածքային ամբողջականությունը:

1988թ. Արցախում բնակվող հայերը պայքարի էին դուրս եկել «Միացում», այլ ոչ թե «Անկախություն» կարգախոսով: Այդ մտասուեւեռումով էր, որ հայ երիտասարդը զենք վերցրեց, կռվեց, զոհաբերվեց եւ հաղթեց: Հայաստանին միանալու երազանքն էր եւ մեծագույն ցանկությունը, որ համայն հայությունը հաղթանակեց անհավասար պատերազմում:

ԽՍՀՄ փլուզումից դեռ երկու տարի առաջ ընդունվել էր Արցախը Հայաստանի հետ վերամիավորող դեկտեմբերյան համատեղ որոշումը, որի հիման վրա Արցախում բնակվող հայերը, որպես Հայաստանի լիարժեք քաղաքացիներ, ընտրեցին հայոց խորհրդարանի իրենց պատգամավորներին, եւ նրանք Հայաստանի շրջանները ներկայացնող գործընկերների հետ միասին հռչակեցին Հայաստանի Անկախությունը: Ինչո՞ւ դրանից հետո անհրաժեշտ դարձավ արհեստականորեն բաժանել մեզ: Ինչո՞ւ կազմակերպվեց ԼՂՀ անկախության հանրաքվեն: Ումի՞ց էինք ուզում անկախացնել Արցախը:

Գաղտնիք չէ, որ հանձնարարականը եկել էր Երեւանից: Հիմնավորումները երկուսն էին: Նախ՝ ենթադրվում էր, թե միջազգային ճանաչման համար Արցախը Ադրբեջանի կազմից պետք է դուրս գար ԽՍՀՄ օրենքներին համապատասխան դրույթների շրջանակներում: Իսկ որպեսզի Ադրբեջանը չկարողանար հարցը ներկայացնել որպես տարածքային վեճ, Երեւանում նպատակահարմար էին գտնում, որ Ստեփանակերտը դառնար որպես հակամարտության ինքնուրույն կողմ: Ենթադրվում էր, որ այս ամենը նախատեսված էր արտաքին աշխարհի համար, իսկ մենք պետք է լինեինք մեկ ազգ, մեկ բանակ եւ մեկ պետություն: Սակայն ստացվեց հակառակը:

Միջազգային հանրությանը խաբել չհաջողվեց: Այնինչ մենք համառորեն շարունակում ենք խաղալ «երկու պետություն» անիմաստ խաղն եւ կարծես թե մոռացել ենք, որ դա ընդամենը խաղ էր: Իսկ հայոց ազգային եւ պետական միասնությունն առ այսօր էլ շարունակվում է վտանգվել: Ուրեմն, ո՞ւմ էր պետք Հայաստանից Արցախի անկախ լինելը:

Հայերիս համար Արցախի խնդիր գոյություն չունի:

Մենք ունենք Արցախի բնակեցման եւ ազատագրված տարածքների վերաբնակեցման խնդիր: Արտաքին աշխարհի եւ մեր հակառակորդների հետ բանակցելու ընթացքում կարող էինք ունենալ երկու հզոր կողման: Այն է.

- Արցախը եւ ազատագրված տարածքները պաշտպանում է հայ զինվորը, ինչը փորձում են ի չիք դարձնել այսօրվա բանակցությունների արդյունքում,

- ազատագրված տարածքներում պետք է բնակեցվեին Ադրբեջանից գաղթած 100 հազարավոր հայեր, ինչը ցավոք չկատարեցին ոչ նախկին, եւ ոչ էլ ներկա իշխանությունները, բացառությամբ Քաշաթաղի մասնակի բնակեցման:

Արցախը երեկ եւ այսօր հայության նորօրյա Ազատամարտի ճակատն է:

Հայաստանի Հանրապետությունում բնակվող հայերս միշտ դեմ ենք եղել Արցախի հարցը քաղաքականացնելուն եւ հանրապետությունում ներքաղաքական իրավիճակն ապակայունացնելուն:

Սակայն այսօր Արցախի նկատմամբ վտանգներն անթաքույց երեւում են, եւ Հայաստանի իշխանությունները նպաստում են Արցախի խնդրի ոչ հայանպաստ լուծմանը, ուստի Արցախում բնակվող հայերը չեն կարող լուռ մնալ եւ համակերպվել այս իրողություններին: Հարցը վերաբերվում է Հայրենիքին: Ով էլ լինի Արցախում դեկավար, պարտավոր է ենթարկվել Արցախում բնակվող հայերի կամքին:

Առաջինը Դուք ազդարարեցիք այդ կամքի արտահայտման մասին:

Հայաստանի եւ նրա անօտարելի մաս հանդիսացող Արցախի անվտանգության ողջ համակարգը խարսխված է հակամարտության արդյունքներով ձեւավորված ռազմաքաղաքական եւ տարածքային այժմյան իրողությունների վրա: Տարածքային նվազագույն զիջումն իսկ հանգեցնելու է զինադարի բուն երաշխիքը հանդիսացող եւ Ադրբեջանի ագրեսիվ նկրտումները զսպող ուժերի փխրուն փոխհավասարակշռության խախտմանը, ներկայիս ռազմաքաղաքական անվտանգության համակարգի

ամբողջական փլուզմանը եւ, դրանով իսկ, Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների վերսկսման անխուսափելիությունը:

Հայաստանի որեւէ իշխանություն պետք է իսպառ հրաժարվի Հայաստանի ազատագրված տարածքների ամբողջականությունը վտանգելու եւ երկրի պաշտպանական համակարգը ոչնչացնելու գնով իշխանական լծակները եւ տնտեսական ապօրինի մենաշնորհային արտոնությունները պահպանելու անիրագործելի մտադրությունից:

Հայաստանի անկախությունը եւ ազատագրված Միացյալ Արցախն այլեւս անշրջելի իրողություն է:

Իրավական դաշտում միացման առաջին քայլը կարող է դառնալ ՀՀ եւ ԼՂՀ «Քաղաքացիության մասին» օրենքներում երկքաղաքացիության մասին դրույթների հստակեցումը եւ Արցախում բնակվող չափահաս հայերին ՀՀ քաղաքացիություն շնորհելը, իսկ հաջորդ քայլը՝ վերամիավորման վերաբերյալ հանրաքվեի անցկացումը Արցախի Հանրապետությունում:

Մեկ անգամ եւս ողջունելով «Արցախի Հանրապետության» ծնունդը, լիահույս եմ, որ ձեր հետագա հայրենասիրական նախաձեռնություններում մինչեւ վերջ հետեւողական կլինեք՝ հանուն Արցախի եւ Հայաստանի հանրապետության միացման եւ հզորացման:

«Միացում» ազգային նախաձեռնության նախաձեռնող խմբի անդամ

Ժիրայր ՄԵՏԻԼՅԱՆ

17.08.09թ. Երեւան

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ. ՔՐՈՆԻԿՈՆ 2006-2009

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ. ՔՐՈՆԻԿՈՆ 2006-2009 (Download PDF, 310kb)